•ПОДПИСКА•

Azg
armenian daily

25 ՄԱՐՏ 1998 ՇԱԲԱԹ # 52 (1555)

Ասոս Բլեյանը կողաշտանի Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայաստանի նախագահության թեկնածու, «Նոր ուղի» կուսակցության ղեկավար Ասոս Բլեյանը ՀՀ նախագահական արտահերթ ընտրություններեր երկրորդ փուլում կողաշտանի Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը:

«Դառնալով Հայաստանի նախագահ, Կարեն Դեմիրճյանը Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծելիս, ի տարբերություն Ռոբերտ Քոչարյանի, ի վիճակի կլինի խուսավարելու», հայտարարեց Բլեյանը: Ըստ Բլեյանի, որն. Դեմիրճյանը չլինելով ղարաբաղյան շարժման մասնակից եւ «շարժման թեկնածու», ազատ է այդ շարժման թողած ժառանգությունից: Կ. Դեմիրճյանը, ըստ «Նոր ուղու» առաջնորդի, երբեւէ պատերազմի չի կոչել, ոչ մի կապ չի ունեցել իշխանություններեր հետ 1988 թվականից հետո, եւ այդ պատճառով «նրա ձեռքերը կապված չեն լինի ոչ մի պարտավորությամբ» ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում: Ա. Բլեյանի կարծիքով, «ազատ խուսավարելու» առավել նախագահի ընդունակությունը դրական գործոն կլինի Հայաստանի համար: «Կարծում եմ, ղարաբաղյան շարժումը պարտություն է կրել եւ այդ պատճառով այն չպետք է այլեւս շարունակվի», ասաց Ասոս Բլեյանը:

Բլեյանը ճշտեց, որ ասվածը իր անձնական տեսակետն է: Իր ղեկավարած կուսակցության դիրքորոշումը կհայտարարվի մոտ ժամանակներս:

ՈՐՍԱՍՏԱՆ

Պաշտոնապատար Կիրիենկոն կառավարություն է ձեւավորելու

ՄՈՍԿՎԱ, 24 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՌԴ կառավարության առաջին փոխվարչապետ Սերգեյ Կիրիենկոն «ամենահավանական, ամենաուժեղ եւ ամենահիրական թեկնածուն է» Ռուսաստանի վարչապետի պաշտոնի համար: Այս կարծիքն է հայտնել երկուշաբթի ՆՏՎ հեռուստաընկերության եթերում ՌԴ նախագահի մամլո քարտուղար Սերգեյ Յաստրժեմբսկին: Յաստրժեմբսկին հայտնել է, որ նախագահն ուշադիր հետեւել է նախարարությունների ղեկավարների գործունեությանը եւ «ինքնուրույն ընտրություն է կատարել հօգուտ Կիրիենկոյի»:

Մարտի 24-ին Բորիս Ելցինը գովեստով է արտահայտվել երկրի արտգործնախարար Եվգենի Պրիմակովի եւ պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւի կատարած աշխատանքի վերաբերյալ: Սերգեյ Յաստրժեմբսկին հայտնել է, թե Ելցինի ակնարկները կարելի է մեկնաբանել որպես նշան, որ նախագահը մտադիր է պահպանել երկու նախարարներին, հայտնել է «Ինտերֆաքս» գործակալությունը:

Միեւնույն ժամանակ, վարչապետի պաշտոնակատար Սերգեյ Կիրիենկոն նախատեսում է խորհրդարանի երկու պալատների նախագահների, խորհրդարանական խմբավորումների եւ քաղաքական ղեկավարների հետ բանակցություններ անցկացնել նոր կառավարության ձեւավորման շուրջ:

Նույն օրը ՌԴ կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Իգոր Շաբդուռասուլովը Մոսկվայում ծեծազրույցի ժամանակ մեկնաբանել է նախարարների կաբինետի պաշտոնանկության երկու վարկածներ: Համաձայն առաջին վարկածի, ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Սկուրատովը իբր թե նախագահի սեղանին է դրել իշխանության վերին էշելոններում կոռուպցիայի վերաբերյալ փաստաթղթեր: Մեկնաբանելով այս վարկածը, Ի. Շաբդուռասուլովը հայտարարել է, որ եթե իրավապահ մարմիններն իրենց տրամադրության տակ ունեն նյութեր, որ վկայում են ցանկացած քաղաքացու կողմից օրենքը խախտելու մասին, ներառյալ նաեւ բարձրաստիճան պաշտոնյաները, ապա դրա համար կա մեխանիզմ դատախազություն, դատարան: Իսկ նախագահը, ըստ նրա, «որոշում ընդունելու այն մակարդակը չէ»:

Ըստ երկրորդ վարկածի, Մոսկվա է վերադարձել Բորիս Բերեզովսկին եւ հանուն իր առեւտրական շահերի սադրել կառավարության պաշտոնանկությունը: Ի. Շաբդուլռասուլովը հայտարարել է, որ ինքը չէր կարի այս կամ այն ձեռնարկատիրոջ գործունեությունը նախագահի որոշման հետ: «Ով ինչ էլ ասի, նախագահը որոշումներ է ընդունում, ինչպես հայտնի է, ինքը», հայտարարել է նա:

Նախատեսվում է նաեւ Կարեն Դեմիրճյանը

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. ՀՀ նախագահի թեկնածու Կարեն Դեմիրճյանի նախընտրական շտաբում աշխատանքային մթնոլորտ է:

Շտաբի մամուլի պատասխանատու Ա. Վալեսյանը նշեց, որ իրենք նորմալ ռիթմով շարունակելու են երկրորդ փուլի քարոզչությունը: Մասնավորապես, հաստատվել եւ ԿԸՀ են ուղարկվել պետական հեռուստատեսությամբ Կ. Դեմիրճյանի անվճար ելույթների եթերաժամերը. մարտի 24-ից սկսած մինչեւ մարտի 29-ը ներառյալ Կ. Դեմիրճյանը ուղիղ եթերում ելույթներ կունենա երեկոյան ժամերին:

Ա. Վալեսյանը նշեց, որ չեն բացառվում թեկնածուի շրջագայությունները մարզեր: Իսկ ԱԺՄ մարտի 24-ի հայտարարության մասին (ԱԺՄ-ն չի պաշտպանում երկրորդ փուլ անցած թեկնածուներից ոչ մեկին) ակնարկվեց, որ այդ կուսակցությունն ավելի հստակ է այն հարցում, թե ում օգտին չեն քվեարկելու:

ԱԺՄ-ն հոսանք է, ո՛չ կուսակցություն, որեւէ թեկնածուի չի պաշտպանում

Ու չի հեռանում ընդդիմադիր բեմահարթակից

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Կինոյի տան դահլիճը, որ բազմիցս ծանր մեղադրանքներ էր «լսել» իշխող վարչախմբի հասցեին եւ միայն մեկ անգամ՝ մտավորական «Ազգային խորհրդի» հինգհազարակման օրը ականատես եղել վարչապետի եւ ուժային նախարարների նկատմամբ աննախադեպ բարյացակամության, երեկ հյուրընկալել էր արտահերթ նախագահական ընտրություններում «բռնգի» արժանացած Վազգեն Մանուկյանի կուսակիցներին եւ համակիրներին: Հրապարակվելու էր ԱԺՄ՝ նույն օրը տեղի ունեցած խորհրդի նիստում ընդունված հայտարարությունը ընտրությունների «եզրափակիչ» դուրս եկած թեկնածուներից եւ ոչ մեկին չպաշտպանելու վերաբերյալ: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է, քանի որ թեկնածուների նախորդ գործունեությունը «համոզեցուցիչ փաստված հիմքեր» չի տալիս, որ նախագահ ընտրվելու դեպքում նրանց իրականացնելիք քաղաքականությունը համընկնելու է ԱԺՄ գաղափարների, հետաքրքրող նպատակների եւ գործելակերպի հետ, ԱԺՄ-ն «որոշում է չպաշտպանել երկու թեկնածուներից ոչ մեկին՝ առաջարկելով քվեարկել համաձայն սեփական խղճի եւ կոչ է անում իր համակիրներին եւ մյուս բոլոր քաղաքական ուժերին ուղղել ջանքերը գոնե այս փուլում աղահովելու համար ազատ եւ արդար ընտրություններ»: Սա թղթի վրա: Իսկ դահլիճում...

Դահլիճում հնչած մեղադրանքների չափազանցակն էականորեն գերազանցում էր ԱԺՄ եւ իր համակիրների նախորդ հավաքների Տեր-Պետրոսյանին դատապարտող ելեւէջումներին: Վերջիններիս թիրախն էլ հասկանալիորեն փոխված էր: ԱԺՄ առաջնորդն իր խոսքն սկսեց ընտրությունների առաջին փուլի վերլուծությամբ «Ի՞նչ տեղի ունեցավ առաջին փուլում»:

Տես էջ 2

ԸՆՏՐԱՐՇԱՎ

ԻՄ բովանդակ ուժերը հօգուտ Ռոբերտ Քոչարյանի

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ինքնորոշում միավորման նախընտրական շտաբը ՀՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում աշխատելու է հօգուտ ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի: Ինչպես ասաց շտաբի պետ Սերսես Զեյնալվանդյանը, նրանց գործունեությունը շարունակվելու է նույն թափով, ինչպես առաջին փուլում՝ օգտագործելով կուսակցության բովանդակ ուժերը: Կանցկացվեն հանրահավաքներ, ինչպես նաեւ հեռուստաելույթներով հանդես կգա ԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը:

Հանրահավաքներ ԻՄ կուսակցությունը կանցկացնի ինչպես Երեւանում, այնպես էլ հանրապետության մարզերում, որոնց մի մասին կմասնակցի նաեւ Ռ. Քոչարյանը:

Մարտի 25-ին Պ. Հայրիկյանը եւ Ռ. Քոչարյանը կլինեն Բերդում, Նոյեմբերյանում եւ Ալավերդիում, համատեղ հանրահավաքներում հանդիպումներ կունենան բնակչության հետ:

Հիմնական խնդիրներում Ռ. Քոչարյանը ավելի մոտ է ՍԻՄ-ի տեսակետներին

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Սահմանադրական իրավունք միությունը մարտի 24-ին կայացած իր ներկայացուցիչների խորհրդի ժողովում որոշում ընդունեց նախագահական ընտրությունների երկրորդ փուլում պաշտպանել Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը:

ՍԻՄ-ի նախագահ Հ. Խաչատրյանը իր ելույթում նշեց, որ չնայած ընտրությունների առաջին փուլում նկատված կեղծիքներին, այնուամենայնիվ այս տարվա ընտրությունները էապես տարբերվում են 1996 թ. ընտրություններից, եւ հնարավոր է մինչեւ երկրորդ փուլ ավելի բարելավվի վիճակը: Առաջին փուլում առաջին երեք թեկնածուների ստացած ձայների հարաբերակցությունը արտացոլում է հասարակության մեջ առկա տրամադրությունները: Ի տարբերություն 1996-ի, այս տարի արձանագրված գրեթե բոլոր միջադեպերի վերաբերյալ հարուցված է քրեական գործ:

Ըստ նրա, «աշխարհը պատրաստ է Հայաստանի կողմից ներկայացվող նոր հայտն ընդունել», խոսքը վերաբերում է ՍԻՄ-ի թեկնածուի նախընտրական ծրագրի հիմնական դրույթին, ըստ որի աշխարհը պատրաստ է տեսնել, որ վերամիավորված Հայաստանը աշխարհին ներկայանալու է նոր ազգային իշխանությունների համակարգով»: Հ. Խաչատրյանը նշեց, որ Ռ. Քոչարյանը հիմնական խնդիրներում ավելի մոտ է ՍԻՄ-ի տեսակետներին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Լեբեդը Ադրբեջանին զգուշացնում է պատերազմի վերսկսումից

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. «Ադրբեջանի իշխանությունների կողմից ինձ հասցեագրված մեղադրանքները շատ տարօրինակ են հնչում, քանի որ ես ոչ մի պաշտոն չեմ զբաղեցնում», Վաշինգտոնում Թուրան գործակալության թղթակցին ասել է Ռուսաստանի Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար գեներալ Ալեքսանդր Լեբեդը՝ Լեռնային Ղարաբաղ իր այցելության կապակցությամբ:

«Եթե Անվտանգության խորհրդի քարտուղարն այցելած լիներ Ղարաբաղ, ես կհասկանայի Ադրբեջանի կառավարության մտահոգությունը: Բայց ես Ղարաբաղ էի մեկնել իմ ընկերներին տեսնելու համար, ասել է Լեբեդը եւ ավելացրել, որ Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է խելամտորեն լուծվի: Կողմերը պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջ եւ հակամարտությունը կարգավորեն օրինական ճանապարհով»: Լեբեդի կարծիքով, հակամարտությունը լուծելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել պատմական փաստաթղթերը, որոնք վկայում են, թե ում է պատկանում այդ տարածքը:

Հնգամյա խուսափել է այն հարցին պատասխանելուց, թե նա կո՞ղմ է արդյոք գոյություն ունեցող սահմանների փոփոխմանը: «Հենց որ Ադրբեջանը վերսկսի պատերազմը Ղարաբաղում, նա սխրված կլինի պատերազմել նաեւ լեզգիների եւ թալիշների դեմ», զգուշացրել է նա:

«Երբ դառնամ Ռուսաստանի նախագահ, ես կլուծեմ այս հիմնախնդիրը», հայտարարել է գեներալ Լեբեդը:

Անցում ամառային ժամանակի

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ինչպես ասացին Հայքեստսանդարտից, «ՀՀ տարածքում ժամանակի հաշվարկման կարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, մարտի 29-ին ժամը երկուսին ժամացույցի սլաքները պետք է մեկ ժամ առաջ տարվեն՝ անցնելով ամառային ժամանակի:

ԴԻՏՈՐԴՆԵՐ

ԵԱՀԿ-ն իր զգուշացում-հայտարարությունը տարածեց Մոսկվայում

ՄՈՍԿՎԱ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայաստանում նախագահական ընտրությունների երկրորդ փուլը նորմալ անցկացնելու համար հանրապետությունում անհրաժեշտ է վերացնել մի ամբողջ շարք խոչընդոտներ, որոնք հանգեցնում են ընտրական օրենսդրության խախտման: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին ասվում է ԵԱՀԿ-ի դիտորդների խմբի այսօր Մոսկվայում տարածված եզրակացության մեջ: Այդ եզրակացությունը խարսխվում է 200 միջազգային դիտորդների հաշվետվությունների վրա, որոնք հետեւում էին Հայաստանի նախագահական ընտրությունների մարտի 16-ին կայացած առաջին փուլի ընթացքին:

Միջազգային դիտորդները նշում են, որ Հայաստանում նախագահական ընտրությունների ազնիվ, ժողովրդավարական անցկացման համար, որոնց երկրորդ փուլը տեղի է ունենալու մարտի 30-ին, անհրաժեշտ է կասեցնել առաջին փուլում ի հայտ բերված այնպիսի չարաշահումներ, ինչպես «զինծառայողների քվեարկումը սպաների թելադրանքի ներքո եւ վերադաս ղեկավարության պահանջով», ոստիկանության եւ ներքգործնախարարության աշխատակիցների առկայությունը ընտրական տեղամասերում եւ նույնիսկ ընտրական հանձնաժողովների անդամների փոխարեն քվեների հաշվմանը մասնակցելու նրանց փորձերը:

Դրանից բացի, միջազգային դիտորդները նաեւ նշել են «զանգվածային լրատվության պետական միջոցների սուբյեկտիվ դիրքորոշումը, որոնք ավելի լայնորեն էին լուսաբանում գործող վարչապետի թեկնածությունը»: ԵԱՀԿ-ի դիտորդները հատկապես ուշադրություն են հրավիրել քվեատուփերի մեջ չհաշվառված քվեաթերթիկներ գցելու դեպքերի, ինչպես նաեւ ընտրական տեղամասերում եղած բռնության փաստերի վրա:

«Հայաստանի կառավարությունը եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է անհապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն ընտրությունների երկրորդ փուլում նշված թերությունները վերացնելու համար: Առաջարկում ենք պատասխան ենք կարեւոր ու կոնստրուկտիվ փոփոխություններ, որոնք չէին իրականացվել նախկինում», ասվում է միջազգային դիտորդների հայտարարության մեջ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿԻՑ

Սկիզբը էջ 1

Մինչ հարցին պատասխանելը, սակայն, ներկայացվեց ԱԺՄ նախընտրական հաշվարկ-վարկածը, որի համաձայն, ժողովրդավարական պետության մեջ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո «ճոճանակը ետ պիտի թեքվեր» տվյալ դեպքում, դեպի «նոստալգիա» կոմունիստական հասարակարգի նկատմամբ հանձին Սերգեյ Բաղալյանի: Վերջինիս դեմ քարոզչությունը դյուրին էր Արեւմուտքի բացասական արձագանքը «կոմունիստական» հետքայլի նկատմամբ: Սակայն «գոյություն ուներ երկրորդ, որը Տեր-Պետրոսյանի հրաժարականի հեղինակն էր համարվում»: Նուկյանի կարծիքով, սահմանափակվում է հայաստանաբնակ դարաբաղցիներով ու կիրովաբադցիներով, վարչապետը չէր անցնելու, ուստի կեղծիքները եւ խախտումները կանխորոշված էին: (Ավելորդ չենք համարում նշել, որ, օրինակ, «Ազգի» ընտրողների 80 տոկոսը, ճշված տվյալներով, քվեարկել էր հոգուս Քոչարյանի, մինչ խմբագրակազմի ափխասակիցներից միայն մեկն է դարաբաղցի՝ այն էլ ծագումով, ոչ ծնունդով-Լ.Պ.):

Ինչեւէ, «առաջացան բարդություններ», այդ թվում Կարեն Դեմիրճյանի թեկնածության առաջադրումը, որը լուծեց «նոստալգիայի խնդիրը»: Դեմիրճյանի վարկանիշն արագորեն աճեց ստեղծելով «բնական հիստերիա», որի դրսեւորումներից մեկն, ըստ Մանուկյանի, Ռաֆայել Ղազարյանի հայտնի հակադեմիրճյանական հեռուստաելույթն էր: «Սկսվեց ընտրակաշառքի բաժանումը այն չափերով, որ չէիր տեսել: Դա [illegible] գնչություն էր, ապպային դավաճանություն: Դա միայն օտարը կարող էր անել (նկատի է առնվում թերեւս վարչապետի «եկվորությունը»: ԱԺՄ նախագահի ողջ խոսքում զսպված չարություն կար Ղարաբաղի եւ դարաբաղցիների նկատմամբ-Լ.Պ.): Դա սրբապղծություն էր, ահաբեկչություն: Փչացած հասարակությունով էլ ի՞նչ պիտի կառուցեն»: Մանուկյանի համար հարցի պատասխանն, ինչպես ասում են, «միանշանակ» է՝ բռնապետություն: Այն, ինչ ընդունելի էր Ղարաբաղում (նկատի է առնվում բռնապետության հաստատումը), ֆանզի այնտեղ գոյություն ունի ազգային գաղափարախոսություն, Մանուկյանի կարծիքով, կործանարար է մեզ համար: Ուստի ԱԺՄ-ն չի պատրաստանալու Ռոբերտ Քոչարյանին («ավեսիսն» ընդունվեց բուռն եւ երկարատեւ ծափահարություններով): Մնում է Դեմիրճյանը: Դեմիրճյանն ԱԺՄ-ի համար անհայտ մարդ է, 14 տարվա նրա իշխանությունն իրականում Բրեժնեւի իշխանություն էր: Դեմիրճյանը չի մասնակցել դարաբաղյան շարժմանը, լավ չի պատկերացնում, թե ինչ է ուզում: Նրա հաղթանակի դեպքում «գուցե ազատ քաղաքական դաշտ, բայց ճահիճ» կանխատեսելով, Մանուկյանը եզրակացրեց. «Չենք պատրաստանում նաեւ Դեմիրճյանին»: Հարց է առաջանում «բա այդ դեպքում ի՞նչն ենք պատրաստանում»: Ինչպես 10 տարի շարունակ «արդարությունը եւ ժողովրդավարությունը», իր հարցին պատասխանեց ԱԺՄ նախագահը՝ զայրույթով մերժելով վերջինս հանում «ինչ որ աբստրակտ ազգային շահեր» պնդաբանելու պնդաբանյալ խոսակցությունները (Տեր-Պետրոսյանի համար կեղծ կատեգորիա էր ազգային գաղափարախոսությունը, Վազգեն Մանուկյանն այսօր աբստրակտ է հոչակում ազգային շա՞հը-Լ.Պ.)

«Երբեմն հարց են տալիս, մի՞թե մեր (ԱԺՄ-ի) ճակատին գրված է, որ միշտ ընդդիմադիր լինենք: Մենք անձնական նպատակներ, ամբիցիաներ չունենք: Ընդդիմադիր դաշտը մարվել է, «արանքում» Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ բանակցությունների մեջ մտնող, բայց արհամարհանքի արժանացող կուսակցությունները այսօր Քոչարյանի կողքին են: Միակ ուժը գուցե մենք էինք, որի հետ Տեր-Պետրոսյանը կուզենար բանակցել, բայց մենք սկզբունքային էինք, չէինք համաձայնում: Հիմա մենք արդեն կուսակցություն չենք, մենք քաղաքական հոսանք ենք: Սա է Հայաստանի առագան: Մեր ժամանակը գալու է», իր ելույթը մոտավորապես այսպես եզրափակեց Վազգեն Մանուկյանը: Այսպիսով, շարժումով սկսված կամ շարժումից սերած կուսակցությունը դարձ է կատարում «ի շրջանս յուր» վերադառնալով հոսանքի կամ, որ նույնն է, շարժման կարգավիճակի:

Քանի որ «Վազգեն Մանուկյանը

ԿԻՆՈՅԻ ՏՈՒՆ

ԱԺՄ-ն հոսանք է, ո՛չ կուսակցություն...

«Ամբողջ ափխարհում նաեւ կասկած կար» այդ հրաժարականի վերաբերյալ: Այդ պայմաններում եղյակից որեւէ մեկի թեկնածության առաջադրումն, ըստ Մանուկյանի, չափազանց վտանգավոր էր: Եղյակը պետք է հայտարարեր, որ անձնական շահեր չի հետապնդում եւ, մի կողմ քաշվելով, արդար ընտրություններ ապահովեր (մի կողմ թողնելով նաեւ Ղարաբաղի ապագա՞ն-Լ.Պ.): Սա ռոմանտիկ տարբերակ էր, ուստի եղյակը պիտի փորձեր «որեւէ խամաճիկի դարձնել նախագահ, ինչին ոչ ոք չհամաձայնեց», կամ, ԱԺՄ նախընտրած տարբերակով՝ միասնական պայմանավորվածության եւ ազգային համաձայնության պայմաններում արդար ընտրություններ ապահովեր: Մինչեւ Արարատի դեպքերը Մանուկյանը պատրաստ էր Վազգեն Սարգսյանի հետ քննարկելու նույնիսկ իր թեկնածությունը մի կողմ դնելու խնդիրը (ո՞ւմ օգտին չասվեց-Լ.Պ.): Սակայն տեղի ունեցավ Արարատի միջադեպը, որից հետո [illegible] Սարգսյանի հետ «կուսակցություն չունի»: Ըստ Մանուկյանի, «Քոչարյան-Սարգսյան» թեկնածությունների վերաբերյալ երկարատեւ վեճերի արդյունքը Քոչարյանի թեկնածության առաջադրումը, անհեթեթություն էր, քանի որ անմիջապես երեւան էին գալու «գրանցման հարցերը»: Բացի այդ, քանի որ տնտեսական իրավիճակը Հայաստանում դեռ երկար չի բարելավվելու, ժողովրդի դժգոհությունն ուղղվելու էր Ղարաբաղի դեմ, սրվելու էր Տեր-Պետրոսյանի օրոք ներմուծված դարաբաղցի-հայաստանցի հակասությունը: Քոչարյանի ընտրազանգվածով, որ, Մանուկյանի կարծիքով, սահմանափակվում է հայաստանաբնակ դարաբաղցիներով ու կիրովաբադցիներով, վարչապետը չէր անցնելու, ուստի կեղծիքները եւ խախտումները կանխորոշված էին: (Ավելորդ չենք համարում նշել, որ, օրինակ, «Ազգի» ընտրողների 80 տոկոսը, ճշված տվյալներով, քվեարկել էր հոգուս Քոչարյանի, մինչ խմբագրակազմի ափխասակիցներից միայն մեկն է դարաբաղցի՝ այն էլ ծագումով, ոչ ծնունդով-Լ.Պ.):

Ինչեւէ, «առաջացան բարդություններ», այդ թվում Կարեն Դեմիրճյանի թեկնածության առաջադրումը, որը լուծեց «նոստալգիայի խնդիրը»: Դեմիրճյանի վարկանիշն արագորեն աճեց ստեղծելով «բնական հիստերիա», որի դրսեւորումներից մեկն, ըստ Մանուկյանի, Ռաֆայել Ղազարյանի հայտնի հակադեմիրճյանական հեռուստաելույթն էր: «Սկսվեց ընտրակաշառքի բաժանումը այն չափերով, որ չէիր տեսել: Դա [illegible] գնչություն էր, ապպային դավաճանություն: Դա միայն օտարը կարող էր անել (նկատի է առնվում թերեւս վարչապետի «եկվորությունը»: ԱԺՄ նախագահի ողջ խոսքում զսպված չարություն կար Ղարաբաղի եւ դարաբաղցիների նկատմամբ-Լ.Պ.): Դա սրբապղծություն էր, ահաբեկչություն: Փչացած հասարակությունով էլ ի՞նչ պիտի կառուցեն»: Մանուկյանի համար հարցի պատասխանն, ինչպես ասում են, «միանշանակ» է՝ բռնապետություն: Այն, ինչ ընդունելի էր Ղարաբաղում (նկատի է առնվում բռնապետության հաստատումը), ֆանզի այնտեղ գոյություն ունի ազգային գաղափարախոսություն, Մանուկյանի կարծիքով, կործանարար է մեզ համար: Ուստի ԱԺՄ-ն չի պատրաստանալու Ռոբերտ Քոչարյանին («ավեսիսն» ընդունվեց բուռն եւ երկարատեւ ծափահարություններով): Մնում է Դեմիրճյանը: Դեմիրճյանն ԱԺՄ-ի համար անհայտ մարդ է, 14 տարվա նրա իշխանությունն իրականում Բրեժնեւի իշխանություն էր: Դեմիրճյանը չի մասնակցել դարաբաղյան շարժմանը, լավ չի պատկերացնում, թե ինչ է ուզում: Նրա հաղթանակի դեպքում «գուցե ազատ քաղաքական դաշտ, բայց ճահիճ» կանխատեսելով, Մանուկյանը եզրակացրեց. «Չենք պատրաստանում նաեւ Դեմիրճյանին»: Հարց է առաջանում «բա այդ դեպքում ի՞նչն ենք պատրաստանում»: Ինչպես 10 տարի շարունակ «արդարությունը եւ ժողովրդավարությունը», իր հարցին պատասխանեց ԱԺՄ նախագահը՝ զայրույթով մերժելով վերջինս հանում «ինչ որ աբստրակտ ազգային շահեր» պնդաբանելու պնդաբանյալ խոսակցությունները (Տեր-Պետրոսյանի համար կեղծ կատեգորիա էր ազգային գաղափարախոսությունը, Վազգեն Մանուկյանն այսօր աբստրակտ է հոչակում ազգային շա՞հը-Լ.Պ.)

«Երբեմն հարց են տալիս, մի՞թե մեր (ԱԺՄ-ի) ճակատին գրված է, որ միշտ ընդդիմադիր լինենք: Մենք անձնական նպատակներ, ամբիցիաներ չունենք: Ընդդիմադիր դաշտը մարվել է, «արանքում» Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ բանակցությունների մեջ մտնող, բայց արհամարհանքի արժանացող կուսակցությունները այսօր Քոչարյանի կողքին են: Միակ ուժը գուցե մենք էինք, որի հետ Տեր-Պետրոսյանը կուզենար բանակցել, բայց մենք սկզբունքային էինք, չէինք համաձայնում: Հիմա մենք արդեն կուսակցություն չենք, մենք քաղաքական հոսանք ենք: Սա է Հայաստանի առագան: Մեր ժամանակը գալու է», իր ելույթը մոտավորապես այսպես եզրափակեց Վազգեն Մանուկյանը: Այսպիսով, շարժումով սկսված կամ շարժումից սերած կուսակցությունը դարձ է կատարում «ի շրջանս յուր» վերադառնալով հոսանքի կամ, որ նույնն է, շարժման կարգավիճակի:

Քանի որ «Վազգեն Մանուկյանը բոլոր կետերը եւ մեխերը» դրել էր, հաջորդ բանախոսը՝ Դավիթ Վարդանյանը, ասելու շատ բան չուներ եւ, լրացնելով գործընկերոջը, զայրույթի նետն ուղղեց Դաշնակցության դեմ, որը նրա կարծիքով «տարօրինակորեն» պատրաստել էր Ռոբերտ Քոչարյանին եւ որի պատասխանատուն, ի հավելումն, իրենց ազգային դավաճանության մեջ է մեղադրում:

Զայրույթի բաժին հասավ նաեւ «երեկ Տեր-Պետրոսյանի ձեռքը համբուրող, այսօր Քոչարյանի վստահված անձ» Սոս Սարգսյանին: Փոխարենը գովեստի խոսքեր ասվեցին «Հայաստանում միակ սկզբունքային կուսակցությունների» «Ազգային առաջադիմության» եւ «Ազգային պետության» հասցեին, որոնց ներկայացուցիչները հավաստեցին իրենց անփոփոխ նվիրվածությունը ԱԺՄ գաղափարախոսությանը եւ Վազգեն Մանուկյանի նախընտրական ծրագրին: Վազգեն Մանուկյանն ինքը հանդես եկավ, վերջին, ըստ ամենայնի, «Քրիստոնեավար» խոսքով: «Ասում են, Ասված ում սիրում է, փորձության է ենթարկում: Ասված տա, որ փորձության ենթարկվենք մենք, ոչ թե մեր ժողովուրդը»: «Լավատեսական ողբերգության» այս շեշտադրումով էլ ավարտվեց ԱԺՄ խորհրդաժողովը:

Ավելացնենք, որ Քոչարյանի եւ Դեմիրճյանի թեկնածությունների «դեմերի» հարաբերակցությունը ԱԺՄ առաջնորդի ներկայացրած «խճանկարում» հուշում է, որ ԱԺՄ ընտրազանգվածը կկողմնորոշվի ավելի շատ Քոչարյանի դեմ:

Հյուծախտը սիրում է իր դեմ ելնել ողջ սպառազինությամբ

Մարտի 24-ը հյուծախտի (տուբերկուլյոզ) դեմ համաշխարհային պայքարի օրն է: Այդ առթիվ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) 50-ամյակին նվիրված միջոցառումների շարքում հրավիրվել էր կոնֆերանս, որ նախաձեռնել էին Հայաստանի թոքաբանների ընկերությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ-ում ԱՀԿ հետ կապերի համակարգման գրասենյակը, Երեւանի քաղաքապետարանի բուժկանխարգելիչ օգնության եւ սոցիալական հարցերի վարչությունը:

Բանախոսները՝ հանրապետության առաջատար մասնագետները, ցավով արձագանքեցին, որ այսօր, 1998-ին, Հայաստանում արձանագրված են հյուծախտով հիվանդության եւ մահացության ամենաբարձր ցուցանիշները: Համեմատության կարգով ասենք, որ 1936 թ. հիվանդությունն առկա էր մինչեւ 14 տարեկան երեխաների 12,6 տոկոսի մոտ, իսկ այս տարվա ցուցանիշը 42,4 տոկոս է: Հյուծախտը սոցիալական հիվանդություն է, եւ դրա տարածման հարցում առողջապահական վրիպումները (համապատասխան դեղամիջոցների բացակայություն եւ այլն) 8-9 տոկոսով միայն կարող են դեր կատարել: Գլխավորապես նշանակություն ունեն իրավիճակի հետեւանքն այնպիսի գործոններ, ինչպիսիք են թերսնումը, ոչ հիգիենիկ կենցաղը, մրսածությունը եւ այլն: Դրան գումարվում է նաեւ անվճար հետազոտության անհնարինությունը, որը խոչընդոտում է կանխարգելող միջոցառումներ իրականացնելուն: Այդ պատճառով բժշկին հաճախ դիմում են արդեն բարդացած դեպքերում: Ուստի բնորոշ է, որ անցյալ տարվա համեմատությամբ հյուծախտով հիվանդությունը աճել է 30, իսկ մահացությունը 60 տոկոսով: 1997 թ. տվյալներով 100 հազար բնակիչներից 27,8 տոկոսի մոտ առկա էր հյուծախտ: Պատկերն առավել վտանգավոր է բանակում, որը բնականաբար արտացոլումն է երկրում տիրապետող սոցիալական վիճակի. յուրաքանչյուր 100 հազարի դիմաց 258 հոգի:

Մասնագետները նշելով, որ հիվանդների 45 տոկոսը ժամանակավորապես այլ երկրներում աշխատելուց հետո վերադարձողներն են, միաժամանակ բերում էին մեկ այլ փաստ, որ հիվանդության թիվը մեխանիկորեն իջնում է միգրացիայի հաշվին: Նույն միգրանտների մասին (այս անգամ՝ Հայաստան մուտք գործող), մենք առիթ ենք ունեցել խոսել մեր թերթի էջերում: Նրանց կենցաղային պայմանները մանավանդ խիստ ծմեռվա ընթացքում գումարվելով մինչ այդ ծեռք բերած հիվանդություններին, լրջորեն վնասում են առողջությանը եւ, եթե բուժտպասարկում չի ապահովվում, շրջապատի համար նրանց ներկայությունը վտանգավոր է դառնում:

Հետաքրքրական է, որ հյուծախտով հիվանդացությունը հանրապետության մարզերում տատանվում է 5,8-36,3-ի միջեւ: Ամենացածր թիվը, որ արձանագրված է Վայոց Ձորում, առանձնապես լավատեսական եզրահանգումներ անելու հնարավորություն չի տալիս, որովհետեւ այնտեղ պարզապես բացակայում է ախտորոշման համապատասխան ծառայությունը:

Հայաստանում ԱՊՀ մյուս երկրների համեմատությամբ վիճակն ամենաբարվոքն է, սակայն դա հանգստանալու տեղիք չպիտի տա: Պրոֆեսոր Մ. Սաֆարյանի կարծիքով, մենք բոլորս ռիսկի խմբի մեջ ենք, եւ պետք է ամեն ինչ անենք պահպանելու մեր փոքրիկ հանրապետությունը:

Տեղական եւ հանրապետական բյուջեն այսօր ի վիճակի չէ սեփական միջոցներով իրականացնել հյուծախտի դեմ պայքարը: ԱՀԿ-ն 1995-ից Հայաստանում սկսել է իրականացնել բուժման DOTS (կարճատեւ բուժման մեթոդ) ծրագիրը, որը խիստ արդյունավետ է: Ծրագիրը հետզհետե ընդարձակվելով ընդգրկել է հանրապետության բնակչության շուրջ 80 տոկոսին: Ըստ ԱՀԿ հայաստանյան գրասենյակի համակարգող պրն Ասլանյանի, ծրագրի հաջողության բանալին (85 տոկոսով բուժում) նաեւ մեր մասնագետների խանդավառ աշխատանքն է, որ ոչ միշտ նպատավոր պայմաններում կատարում է իր գործը: ԱՀԿ-ն, իհարկե, բավականաչափ քանակությամբ դեղամիջոցներ է տրամադրել: DOTS ծրագիրը իրականացվում է աշխարհի 70 երկրներում: Համաշխարհային բանկը DOTS-ի ռազմավարությունը բնորոշում է որպես ամենաարդյունավետներից մեկը: 51 երկրների շարքում Հայաստանի ծրագիրը համարվում է ամենահաջողը: Սակայն, այդ ամենով հանդերձ, հիվանդացության աճը (այն նկատելի է ոչ միայն ԱՊՀ, այլեւ զարգացած երկրներում՝ գլխավորապես միգրանտների պատճառով) մեր հանրապետությունում մտահոգության եւ ավելի կտրուկ գործողությունների դիմելու անհրաժեշտություն է առաջացնում: Հարկավոր են համալիր միջոցառումներ ոչ միայն առողջապահական օղակների առկայությամբ: Իսկ տկն Սաֆարյանը կարեւորեց նաեւ համապատասխան օրենքի ընդունումը, առանց որի անհնար կլինի աշխատել:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՊԵՐ

Մարտի 25-ը Հունաստանի անկախության տոնն է

«Հույն եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը պետք է վերաճի համապարփակ ու հստակեցված համագործակցության՝ հաշվի առնելով կողմերի ռազմավարական ու հստակ տարածաշրջանային շահերի ընդհանրությունը»: Այդ մասին «Ազգի» թղթակցին ասաց ԼՂՀ Աժ պատգամավորության եւ անվտանգության հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Ռուդոլֆ Մարտիրոսյանը: Նրա խոսքերով այդ համագործակցությունը անհնարին էր խորհրդային իշխանությունների օրոք, ինչպես նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ռեժիմի գոյության պայմաններում: Ներկայումս հայ-հունական հարաբերությունների ընդլայնման եւ ամրապնդման համար առկա են գրեթե բոլոր նախադրյալները: «Էքոնոմատմական տեսանկյունից աշխարհում հավանաբար չկան այդքան նման ժողովուրդներ, որքան հայերն ու հույները են: Պատմության տարբեր ժամանակահատվածներում բազմաթիվ հայեր պայքարել են Հելլադայի անկախության համար: Մարտակերտի շրջանի Մեհման հունական գյուղի կամավորականները ակտիվորեն մասնակցել են ԼՂՀ ազատության համար մղված մարտերին: Նրանցից շատերը պարգեւատրվել են ԼՂՀ բարձրագույն պետական շքանշաններով: Երկու ժողովուրդների ձգտումը իրար նկատմամբ պետք է խրախուսվի պետականորեն, իշխանության տարբեր կառույցների մակարդակով», նշեց Մարտիրոսյանը: Ըստ հանձնաժողովի փոխնախագահի, Կիպրոսի եւ ԼՂՀ-ի խնդիրները մեկ անգամ եւս առաջացուցին են երկուստեք շահավետ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: Դրան պետք է միսված լինի նախ եւ առաջ դիվանագիտական հաստատությունների գործունեությունը:

Այսօր՝ մարտի 25-ին, Հունաստանի ազգային անկախության օրը, կցանկանայի շնորհավորել եղբայրական հուն ժողովրդին. մաղթել նրան բարգավաճում ու խաղաղություն», ասաց Ռուդոլֆ Մարտիրոսյանը:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ստեփանակերտ

Գարեջրի տոնը Հայաստանում ավանդական

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ՍՆՄԲ: Հայաստանում գարեջրի տոնը կնշվի ապրիլի 3-5-ը: Երեք տարի շարունակ այն անցկացնում է գերմանական «Հոլսբեն» ֆիրման, որի արտադրանքը հանրապետությունում մեծ պահանջարկ է վայելում: Այդ օրերին տոնական միջոցառումներ կանցկացվեն Հայաստանում այդ ֆիրմայի բոլոր բարերում, որոնց այցելուներին՝ բացառապես հրավիրատոմսերով, ազգային սեղաններ են սպասում, անվճար գարեջուր եւ... մրցույթ «Ինչ գիտեմ Գերմանիայի մասին» թեմայով: Ապրիլի 5-ին Երեւանում «Հոլսբեն» ֆիրմայի ներկայացուցչությունում կկայանա եզրափակիչ խաղը, որի հաղթողին կվիճակվի Համբուրգի ուղեգիր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
հանձնարարյալ շարուածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor,
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

Մամլոնտրակտ

ՀՈԳԵԲՈՒՅԺԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի բնակչությունը ախտորոշեց թեկնածուներին

Ասում է Երեւանի գլխավոր փսիխոթերապեւտը

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մի առիթով ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանին հարցրել են, թե ի՞նչ կստացվի, երբ ՀՀ նախագահի թեկնածուները հավաքվեն կլոր սեղանի շուրջ. նա պատասխանել է «գժանոց»: Երեւանի գլխավոր փսիխոթերապեւտ, հոգեբույժ Հարություն Մինասյանի կարծիքով Վ. Մանուկյանն այնքան էլ չի սխալվել: Հ. Մինասյանն արդեն մի քանի տարի է, ինչ բարձրացնում է նախագահի կամ ԱԺ պատգամավորության թեկնածուներից առողջական վիճակի մասին անկախ բժշկական հանձնաժողովի փաստաթուղթ պահանջելու հարցը: Նա նաեւ հեղինակ է մի շարք այլ համարձակ առաջարկների՝ Հայաստանում բազմակնության ընդունման, հասարակաց տների, համասեռամոլության, թմրամոլության լեգալացման եւ այլն:

Թեկնածուների տոկոսների նվազման հետ ավելանում է պաթոլոգիական վիճակի հավանականությունը:

Եթե կատարենք մի այսպիսի պայմանական բաժանում առողջներ, սահմանային վիճակներ եւ բնավորության պաթոլոգիական գծեր ունեցող մարդիկ, ապա կտեսնենք, որ համենայն դեպս, 12 թեկնածուների առաջին եռյակում ես տեսնում եմ միանգամայն առողջ մարդկանց, չորրորդ, հինգերորդը սահմանային վիճակում են, իսկ մնացածները մտնում են վերոհիշյալ երրորդ խմբի մեջ:

- Չե՞ք վախենում նման պատասխանատու հայտարարություններից:

- Ես շատ ուրախ կլինեի, որ ընդունվեր իմ կողմից արդեն մի քանի տարի շարունակ բարձրացվող առաջարկությունը՝ անկախ բժշկական հանձնաժողովի եւ պարտադիր բժշկական քննության վերաբերյալ, վերջապես ընդունվեր համապատասխան օրենքներով, եւ թեկնածուները իրենց ծանրակշիռ բժշկական փաստաթղթերով կարողանային հակառակն ապացուցել ինձ, մասնագետներին, իրենց ընդդիմադիրներին եւ հասարակությանը: Վերջապես, իմ այս պնդումներն անելու համար պարտադիր չէ հոգեբույժ լինել. դա երեւում է անգամ թեկնածուների հեռուստաելույթներից:

Օրինակ, որոշ թեկնածուներ իրենց ելույթներում մեծամոլական մտքեր էին արտահայտում, որոնք մեր պրակտիկայում կոչվում են «գերարժեք» կամ «զառանցական» մտքեր: Իսկ որոշ թեկնածուների կարծիքով, վերեւում Աստվածն է, Հայաստանում իրենք են, եւ արդեն ի վերուստ կանխորոշված էր նրանց նախագահ լինելը: Ի վերջո, մարդու վարքագծի, արտահայտման մեջ կան տարբեր, որոնք էականորեն ազդում են նրա վարկանիշի վրա: Օրինակ, քարոզարշավի ժամանակ մեկին խանգարեց շատախոսությունը, մյուսին ձայնի ծանծաղալի ինտոնացիան, մեկ ուրիշին էքսցենտրիկությունը եւ այլն:

Այդ բոլորի հետեւանքով որոշ մարդիկ հավաքեցին, օրինակ, 0,1-0,2 տոկոս ձայն: Մինչդեռ նրանք պետք է նախօրոք գնահատեին իրենց հնարավորությունները եւ չվարկաբեկվելու համար պարզապես չառաջադրեին իրենց թեկնածությունը: Այսինքն, առկա է «ինքնաքննադատության» բացակայությունը (հոգեբուժության մեջ այդպիսի արտահայտություն կա):

- Բայց չէ՞ որ ցանկացած քաղաքական գործիչ ու նախագահության հավակնորդ պետք է ունենա ինքնավստահություն եւ այլ ընդգծված հատկանիշներ...

- Դա, իհարկե, պետք է, բայց այդ հատկանիշների չափազանց արտահայտվելն արդեն հիվանդագին երեւույթ է: Իմ հաճախորդների մեջ ես գրեթե ամեն օր հանդիպում եմ այդպիսի մարդկանց: 12 թեկնածուների մեջ կան մարդիկ, որոնք նախկինում ունեցել են հոգեբուժական տարբեր պրոբլեմներ եւ դիմել են հոգեբույժի օգնությանը: Ես, իհարկե, էթիկայի տեսակետից, անուններ չեմ կարող հրապարակել: Մամուլում եւս եղան հրապարակումներ, որտեղ թեկնածուները, նրանց վստահված անձինք ու համախոհները մեկը մյուսին բժշկական ախտորոշումների են ենթարկում:

- Հաճախ է արտահայտվում այն կարծիքը, որ ՀՀ նախորդ նախագահը շատ էր հեռացել ժողովրդից ու իրեն պատել էր խորհրդավորության քողով: Ստացվում է, հիմա չե՞նք ուզում, որ մեր նոր նախագահը լինի մի սովորական մահկանացու իր լավ ու վատ հատկանիշներով, ինչու չէ՝ նաեւ թերություններով:

- Բայց թերություններ կան, որոնք անհանդուրժելի են: Օրինակ, եթե ծխախոտամոլությունն ու կնամոլությունն ինչպես տեղ ներելի են, ապա, ասենք, հարբեցողությունն արդեն անհամատեղելի է նախագահի պաշտոնի հետ: Աշխարհի շատ երկրներում ընդունված է, որ ոչ միայն ընտրվող նախագահները, այլեւ խորհրդարանների պատգամավորները, բարձրաստիճան պաշտոնյաները ժամանակ առ ժամանակ բազմակողմ բժշկական քննության ենթարկվեն:

Բացի դրանից, թեկնածուն (նախագահի կամ պատգամավորության) պետք է ներկայացնի առողջության փաստաթուղթ, ինչպես վարորդական իրավունքի, թեկուզ եւ որսորդական զենք կրելու համար են ներկայացնում: Եթե վարորդը վթարի դեպքում վնասգիր է ենթարկում միայն իրեն ու ուղեւորներին, ապա նախագահը կամ պատասխանատու պաշտոնյան ամբողջ ժողովրդին: Ընդ որում այդ փաստաթուղթը, որը պետք է լինի ոչ միայն հոգեկան, այլեւ ողջ օրգանիզմի առողջական վիճակի մասին, պետք է ներկայացնի տարբեր կուսակցություններից առաջարկված բժիշկներից բաղկացած անկախ, անձեռնմխելի հանձնաժողովը: Համաձայնեք, որ մեկը, որն ունի քաղցկեղ եւ մեկ տարվա կյանք, չի կարող լինել լիարժեք նախագահ եւ երկիրը քարուքանդ կանի: Նախագահը ազգի ընտրյալն է եւ պետք է լինի իդեալական բոլոր կողմերով «առողջ հոգի առողջ մարմնի մեջ»: Օրինակ Լենինը, որը տառապում էր ուղեղի սիֆիլիսով, Ստալինն ու Հիտլերը՝ պարանոյայով, Ալեքսանդր Մակեդոնացին՝ ընկնավորությամբ, Բերիան՝ սեքսուալ շեղումներով, Չերժինսկին թմրամոլությամբ, եւ այդ բոլոր «վայ» առաջնորդները եղել են զոհերի ու ավերածությունների պատճառ:

Իմիջիայլոց, մեր նախկին խորհրդարանում էլ կային հոգեբուժարանում պառկած մարդիկ:

- Իսկ ինչպիսի՞ն է հասարակության վիճակը:

- Հասարակությունը հոգեպես խեղված է: Վերջին 10 տարվա իրավիճակը երկրաշարժ, պատերազմ, քաղաքական եւ տնտեսական ալեքախումներ: Շատացել են նեւրոզով հիվանդները: Քաղաքում կա ներքին լարվածություն եւ գրգռվածություն, որն ավելի ակնառու է դարձել վերջին մեկ ամսվա ընթացքում: Մարդկանց նյարդերը նման են ձգված զսպանակի, բավական է մի առիթ, որ կտրվի:

Հարցազրույցը վարեց
ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ-ն շահարկումների առիթ չդարձնելու կոչ

Մարտի 24-ին ԼՂՀ գրողների միությունը, «Մենք» մտավոր ակումբի անդամները, Արցախի պետհամալսարանի մի խումբ դասախոսներ, ընդհանուր առմամբ ավելի քան 100 մտավորականներ հանդես են եկել հետեւյալ հայտարարությամբ:

«Վերջին ժամանակներս հայկական եւ ռուսական զանգվածային լրատվամիջոցներում սկսել են հայտնվել հրապարակումներ, որոնք հիմնված են ԼՂՀ-ի իմիջի վարկաբեկմանն ուղղված եւ ազգային ազատագրման երկարամյա պայքարում արցախցիների ձեռքբերած նվաճումները արժեզրկող ենթադրությունների ու անհիմն մտահանգումների վրա: Քանի որ դրանք ուղղակիորեն կապված են ՀՀ-ում անցկացվող նախագահական ընտրությունների հետ, ապա ոչ մի կասկած չի մնում այդօրինակ նյութերի պատվիրատուների նկրտումների վերաբերյալ: Իշխանության ծարավի պատճառով նրանք չեն խորհում քաղաքական պայքարի ամենակեղտոտ միջոցներից, միամտորեն կարծելով, որ սպվեր ձգելով մյուսների վրա, իրենք կարող են մաքուր մնալ: ԼՂՀ-ն նրանք դարձրել են շահարկումների առիթ, իշխանության համար պայքարի գործիք: Մենք հասկանում ենք, որ նման արկածախնդրության կարող են գնալ միայն նրանք, ում հայտնի չէ, թե ինչ գնով է ձեռք բերվել Արցախի ազատությունը եւ ով, մեծ հաշվով ոչ մի առնչություն չունի այդ նվաճումների հետ: Նման մարդկանց համար ոչինչ չարժե մի քանի օրում վիժեցնել Արցախի՝ տարիներով ձեւավորված իմիջը, վիրավորել մի ժողովրդի արժանապատվությունը, որը սեփական զրկանքների ու կյանքի գնով պաշտպանել է համայն հայության պատիվը:

Մենք՝ ԼՂՀ մտավորականության ներկայացուցիչներս, վրդովված ենք նման հրապարակումների երեւան գալու փաստով, կտրականապես դատապարտում ենք նախընտրական արշավի նման մեթոդները եւ գտնում ենք, որ ոչ մի կերպ թույլատրելի չէ պատեհապաշտական խնդիրների լուծման նպատակով դարաբաղյան թեմայի օգտագործման ցանկացած ձեւ: Մենք ՀՀ քաղաքացիներին կոչ ենք անում ոչ մի դեպքում չմոռանալ համազգային շահերը եւ դրանք չզոհաբերել այսրոպեական քաղաքական շահերին»:

Ընտրողը հակախարոզչությունից կուշտ է: Իսկ թեկնածուն՞ը

Հետահայաց անդրադառնալով արտահերթ նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչությանը, ստիպված ենք արձանագրել, որ վերջինիս ամենահանրամատչելի դրսեւորումը՝ նախընտրական հեռուստաթերը, չնայած նախագահի գրեթե բոլոր թեկնածուների գոնե խոսքով եւ ծրագրերով «ամրագրված» նվիրվածությանը ազգային շահերին, միասնությանը եւ չարչրկված ժողովրդավարությանը, լի էր անքննադատելի, ոչ միայն մրցակիցների (գլխավորապես «նոմենկլատուրայի ներկայացուցիչ» հինգերորդ դժբախտություն, թե բարեբախտություն ունեցող վարչապետի), այլեւ հեռուստադիտողի արժանապատվությունը մարդկայնորեն տրորող քույնով ու չարությամբ: Չէր կարելի, պարզապես անհերելի էր օգտվելով ընտրության օրենքով սահմանված եթերաժամերից, չարախոսություններ արտավիժել հեռուստաէկրանից՝ առանց այն էլ ամեն ինչից հոգնած ու վիհսված, հիշական վարչակարգի ուրնամյա «տիրապետությունից» տնտեսապես ու բարոյապես ամայացած հեռուստադիտողի վրա սպառնալիքների եւ զգուշախոսության «լավաներ» ժայթքելով:

Տեր-Պետրոսյանի «հակասահմանադրական հրաժարականի» մեղավորին «մշակելու», կոպիտ ասած, հայհոյելու «առաքելությամբ» ընտրարշավի մեջ մտած թեկնածուները (անուններ չտանք) ձախողվեցին՝ իրենց հնարավորություններին եւ վարկանիշերին համապատասխան չափերով: Սրանց հակառակ, ի սկզբանե պարկեշտ քարոզչական մարտավարություն որդեգրած թեկնածուները՝ Հրանտ Խաչատրյան եւ Արամ Սարգսյան, Արտաշես Գեղամյան, նույնիսկ «անսովոր» Յուրի Մկրտչյան, անկախ ստացած քվեների թվից, հաստատեցին իրենց արժանապատիվ կերպարը՝ համապատասխանաբար արձագանքելով նաեւ արդարության դիրքերից, բայց հանուն սեփական ամբիցիաների արգախյան կարգավորման բանակցություններում հակառակորդ(ներ)ի խաղաթղթերը հաղթահարելով համալրած թեկնածուների կողմից ստորագրված վայ-հայտարարությանը:

Պարույր Հայրիկյանի նախընտրական պահվածքը հիմնականում չեզոք էր, թեեւ ԻՄ նախագահի նյարդերը որոշակիորեն տեղի տվին զանգվածային «երիկային կարոտախտին» ի տես, ինչը դրսեւորվեց նրա քարոզարշավի վերջին ակորդներում: Կոմկուսի առաջնորդի քարոզարշավը չափազանց կոշտ էր հաջողության հավակնող բոլոր թեկնածուների նկատմամբ, ինչը կոմունիստների համընդհանուր անհանդուրժողականության, ազգի փրկությունը միայն ու միայն սոցիալիզմի «շրջանակում» եւ բացառապես Ռուսաստանի փրկարար թեւի տակ տեսնելու մտայնության բնական հետեւանք էր: Ցավալի էր, սակայն, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի մի քանի աթակիցների նախընտրական պահվածքը, որ հեռու էր վայելուչ լինելուց եւ ի սկզբանե համեմված էր պարտության կանխազգացումով թելադրված խուճապային ֆինտության տարրերով (վերջինիս պսակը Շավարշ Քոչարյանի ջղածիգ հեռուստաելույթն էր ընտրությունների ծիշտ նախօրեին, գրեթե «վերջին խոսքի» կարգավիճակով):

Փոխադարձ մեղադրանքներ հնչեցին նաեւ «եզրափակիչ» դուրս եկած երկու թեկնածուների՝ Ռոբերտ Քոչարյանի եւ Կարեն Դեմիրճյանի վստահված անձանց ելույթներում, սակայն թեկնածուներն իրենք, բարեբախտաբար, բավականաչափ զուսպ էին եւ «իրենց շուրթերն անեծքով չպղծեցին»՝ «սեփական» ընտրազանգվածների արժանապատվությունը չվիրավորելով: Նախընտրական չափազանց խիտ քարոզչության ընթացքում հեռուստադիտողը հոգնեց, անգամ «զզվեց» փոխադարձ կամ միակողմանի հրածգություններից եւ այս անգամ, հուսանք, բարոյական կորուստը հաստատելու հնարավորություն կտանա, քանզի թեկնածուների թիմերը պետք է որ, հանրագումարի բերելով իրենց թերացումները, քարոզչությունն անցկացնեն ոչ թե «դեմ»՝ այլ «հանուն» սկզբունքով՝ չափավորության սահմաններում, ըստ անհրաժեշտության օգտվելով հակառակորդ «ճամբարի» ամիլեսյան գարշապարը խոցելու հնարավորությունից: Փոխադարձ հանդուրժողականության կարեւորությունը դժվար է գերագնահատել հատկապես այն առումով, որ նախընտրական քարոզչության մթնոլորտն անխուսափելիորեն պայմանավորում է ընտրությունների բուն ընթացքը: Ընտրություններից առաջ ստեղծված կրքերն անհնար է սանձել մեկ օրում, թեկնածուների նյարդային գրգռվածությունը փոխանցվում է ընտրազանգվածներին, եւ ընտրությունը լինում է այնպիսին, ինչպիսին եղավ՝ բազմակողմանի խախտումներով, որ ընտրվելիք նախագահին, քաղաքական որոշակի շահագրգռություններ ունեցող դիտորդների «աջակցությամբ», «էս գլխից» խոցելի են դարձնում միջնորդ երկրների ճնշման նկատմամբ՝ Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցություններում: Առավել եւս կարեւոր է, որ ընտրությունների երկրորդ փուլ անցած թեկնածուները, որ որոշակի ակնկալիքներ են ներշնչում ոչ թե «վատի եւ ավելի վատի», այլ «լավի եւ ավելի լավի» միջեւ ընտրելու եզակի հնարավորության առաջ կանգնած հայ մարդուն, ընտրապայքարի «ջենտլմենական» չափանիշներ որդեգրելով, հաստատեն, որ արժանի են ընտրողների վստահությանը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ,

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Ով ինչ է խոսանում

Ռոբերտ Քոչարյանի եւ Կարեն Դեմիրճյանի ծրագրերի համեմատություն

Ուրիշ ունեցել եմ մամուլում ընդգծելու, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ անցած երկու թեկնածուների՝ Ռոբերտ Քոչարյանի եւ Կարեն Դեմիրճյանի նախընտրական ծրագրերում իրարամերժ գաղափարախոսությունների նշույլ չկա: Ավելին, մեր ժողովրդին հուզող կարեւորագույն հարցերի լուծման նկատմամբ նախագահի երկու թեկնածուները համանման մոտեցումներ ունեն կամ այդ մոտեցումները ավելի շատ ջիման, քան տարանջատման կետեր ունեն:

Այսպես, կարեւորագույն խնդրում՝ Արցախի հարցում, Ռոբերտ Քոչարյանի նախընտրական ծրագիրը նախատեսում է. «Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումը համազգային խնդիր է, որի շուրջը ողջ ժողովրդի համախմբվենք բոլորս Հայաստանում, Արցախում, սփյուռքում»: Կարեն Դեմիրճյանը նույնպես նշում է, թե դա «համազգային խնդիր է»: Ռոբերտ Քոչարյանը գտնում է, թե «ելնելով խնդրի խաղաղ կարգավորման սկզբունքից» անհրաժեշտ է «բանակցային ճանապարհով հասնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչմանը՝ միաժամանակ երաշխավորելով նրա անվտանգ գոյությունը ապահով սահմաններում, մայր հայրենիքի հետ մշտական աշխարհագրական կապով»: Կարեն Դեմիրճյանի ծրագիրն այդ առթիվ, գրեթե նույն բառերով, արձանագրում է, թե «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայությունների մեջ առաջին տեղում է ԼՂՀ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը... որի լուծմանը պետք է հասնել խաղաղ ճանապարհով, քաղաքական բանակցությունների միջոցով»: Հետեւաբար, երկուսն էլ մատնանշում են արցախահայության ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը խաղաղ բանակցությունների միջոցով: Ռոբերտ Քոչարյանի ծրագրում ի հավելումն, մատնանշվում է ԼՂՀ «անվտանգ գոյությունը ապահով սահմաններում, մայր հայրենիքի հետ մշտական աշխարհագրական կապով», սակայն սա ինքնըստինքյան հասկանալի է, որովհետեւ ինչպե՞ս կարող է լինել ԼՂՀ-ի «ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչում» առանց անվտանգ ու ապահով սահմանների եւ հայրենիքի հետ ուղղակի կապի:

Համանման են երկու թեկնածուների արտաքին քաղաքականության դրույթները: Երկուսն էլ հատուկ կարեւորություն են տալիս Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների հետ Հայաստանի հարաբերություններին: Ռոբերտ Քոչարյանի մոտ դա ձեւակերպված է այսպես. «Արտաքին քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է ակտիվացնել ԱՊՀ շրջանակներում համագործակցությունը, հատկապես կարեւորելով Ռուսաստանի հետ մեր ավանդական կապերի հետագա զարգացումը»: Կարեն Դեմիրճյանը հայտարարում է. «ԱՊՀ երկրների հետ ակտիվ համագործակցությունը, ինտեգրացման ծրագրերին մասնակցությունը. Ռուսաստանի հետ ստրատեգիական դաշինքի ամրապնդումը եղել եւ մնում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններ»: Երկու թեկնածուները կարեւորում են նաեւ Հայաստանի տարածաշրջանային քաղաքականությունը: Ռոբերտ Քոչարյան. «Առաջնահերթ են հարաբերություններն անմիջական հարեւանների, հատկապես Իրանի եւ Վրաստանի հետ: Մենք պետք է ակտիվորեն մասնակցենք տարածաշրջանային համագործակցության ծրագրերին՝ շեշտը դնելով տնտեսական կապերի զարգացման վրա»: Կարեն Դեմիրճյան. «Հայաստանը կձգտի տարածաշրջանի բոլոր երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման»: Ինչպես տեսնում ենք, Քոչարյանն ավելի կոնկրետ է, Դեմիրճյանն ավելի ընդհանրական, սակայն մոտեցումը նույն է: Հատկանշական է, որ թեկնածուները գրեթե նույն բառերով բնութագրում են նաեւ Հայաստանի վերաբերմունքն այս աշխարհի հզորների նկատմամբ: Ռոբերտ Քոչարյան. «Արտաքին քաղաքականության համար ռազմավարական նշանակություն ունեն հարաբերությունները քաղաքական ու տնտեսական մեծ ազդեցություն ունեցող երկրների հետ: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի ԱՄՆ-ի, Եվրամիության եւ նրա անդամ երկրների հետ հարաբերությունների խորացումը»: Կարեն Դեմիրճյան. «Հայաստանը կձգտի փոխշահավետության հիման վրա ակտիվ համագործակցության ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, աշխարհի մյուս պետությունների հետ»:

Երկուսի ծրագրերում էլ հատուկ տեղ է հատկացված հայրենիք-սփյուռք հարաբերություններին: Քոչարյանը խոսանում է ստեղծել ու կատարելագործել այնպիսի մեխանիզմներ, որ սփյուռքը «զգա մեր պետական հովանավորությունը եւ կարողանա լիարժեք մասնակցել հայկական պետության կյանքին ու մեր ազգային իղձերի իրականացմանը»: Ընդսմին, ընդգծվում է, թե «դրան կնպաստի երկքաղաքացիության խնդրի լուծումը»: Կարեն Դեմիրճյանը նույն հարցերի առթիվ նույնպես խոսանում է լուծել երկքաղաքացիության հարցը, «ստեղծել համապատասխան կառույցներ հայրենիքի եւ սփյուռքի կապերի սերտացման նպատակով», առաջնորդվել «մեկ հայրենիք, մեկ ազգ» կարգախոսով:

Հետաքրքիր են պետական կառավարման ոլորտի մասին երկու թեկնածուների պատկերացումները: Ռոբերտ Քոչարյանը խոսանում է «իշխանության ճյուղերի միջեւ հավասարակշռվածության ապահովում», «հանրապետության վարչատարածային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ առկա խնդիրների լուծում, սահմանադրական փոփոխությունների իրականացում», մի տեսակ, արդեն իբրեւ մեկ տարվա վարչապետ, խոստովանելով, որ դրանք լուծված չեն: Լուծված չեն նաեւ իշխանավորների գործունեության հրապարակայնության, վերահսկելիության, նրանց եկամուտների թափանցիկության, կաշառակերության դեմ պայքարի ու այլ հարցեր, որ դարձյալ խոստանում է ապահովել: Կարեն Դեմիրճյանը իր հերթին խոստանում է «Սահմանադրության մեջ մտցնել համապատասխան փոփոխություններ եւ հասնել իշխանությունների այնպիսի տարանջատման, որպեսզի իշխանության ճյուղերից եւ ոչ մեկը գերակայություն չունենա մյուսի նկատմամբ», օրենքի մեջ ուղղում կատարելով երաշխավորելով «դատական իշխանության ինքնուրույնությունը», «իշխանության չարաշահման, խարդախության, կաշառակերության փաստերով, ինչպես նաեւ խաբված ավանդատուների խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ստեղծել հատուկ պետական հանձնաժողով՝ օրենքով սահմանված կարգով քննության առնելու եւ կրած վնասը մեղավորի հաշվին փոխհատուցելու համար», «կատարելագործել... եւ խստացնել ընտրությունների մասին օրենքների խախտման համար սահմանված պատժամիջոցները», «բարձրացնել իշխանության պատասխանատվությունը ժողովրդի հանդեպ»:

Երկու թեկնածուներն էլ խոստանում են խրախուսել խոսքի եւ մամուլի ազատությունը, աջակցել անկախ մամուլի կայացմանը, կադրային քաղաքականությունը վարել ոչ կուսակցական դիրքերից: Հատկապես այս վերջինի առթիվ Ռոբերտ Քոչարյանը նշում է. «Արհեստավարժ ու բարոյական, այլ ոչ թե կուսակցականացված պատասխանատվություն»: Կարեն Դեմիրճյանը նույն բանն է խոստանում. «Դեկավար պատասխանի նշանակելու համար հիմք կլինեն միայն քաղաքացու պրոֆեսիոնալ բարձր գիտելիքները, գործիմացությունը եւ բարոյական հատկանիշները», քանի որ կադրային քաղաքականությունը կառուցվելու է «արտակուսակցական հիմքերի վրա»:

Երկու թեկնածուների ծրագրային հիմնադրույթներից կատարած առաջ մեջբերումներով հավանաբար արդեն հոգնեցրի ընթերցողին, ուստի այլեւս չշարունակեմ, նշելով, որ այսպիսի բազմաթիվ համանմանություններ կան նաեւ այլ բնագավառներում: Ինչի՞ց է դա գալիս: Անկասկած երկրի առջեւ ծառացած խնդիրների հսկայական գիտակցումից եւ դրանց լուծման հարցում այլընտրանքային ուղիների ոչ ամենաին լայն հնարավորությունների սպառ գնահատականից: Հետաքրքիր ակնհայտ է, որ նախագահի թեկնածուները, որոնցից մեկին ընտրությունների երկրորդ փուլում անվերապահորեն պարտություն է վերապահված, ինչպես որ մյուսին հաղթանակ, գաղափարական առումով ամենաին հակառակորդներ չեն եւ բարի կամքի դեպքում կարող են համագործակցել նաեւ ընտրություններից հետո, համատեղ ձեռնամուխ լինելով այն նպատակների իրականացմանը, որոնք քանկ են նրանցից յուրաքանչյուրին: Իսկ թե նրանցից ո՞րը նախագահի, ո՞րը աջակցողի կարգավիճակում, պետք է վճռեն արդեն ընտրողները երկրորդ փուլում: Եվ այստեղ վճռականը, ըստ իս, հանդիսանալու է այն, թե ընտրողների մեծամասնությունը թեկնածուներից որի՞ հետ է ավելի մեծ հույսեր կապում. նրա՞, ով առայժմ խոստանում է միայն, թե՞ մյուսի, որ ավելի քան 12 ամիս արդեն գործողության մեջ է դրել այդ ծրագիրը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ասմող տառապանքի վավերագիր

ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբին կից գործում է քաղաքացիների դիմումների ընդունման կետ, որը տեղակայված է Թեքեյան կենտրոնի առաջին հարկում: Իմ զրուցակիցն է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության վարչության անդամ Հարություն Առաքելյանը, որը զբաղվում է դիմումների համակարգումով:

«Մարտի 19-ի դրությամբ ստացվել է ավելի քան 4600 դիմում, որոնց 60 տոկոսից ավելին ստացել է պատասխան նույն կետի միջոցով: Ժողովրդի հետ աշխատում են ՀՈԱԿ «Արմենական» եւ «Վան» ակումբների երիտասարդները: Չէինք պատկերացնում այս աշխատանքի ծանրությունը, սակայն, կարծես, օր-օրի մեր երիտասարդները, հաղորդակցվելով մարդկանց սոցիալապես առավել անապահով խավի հետ, ավելի իրատեսական պատկերացում կազմեցին կյանքի մասին:

Պատկերացրեք, բոլորը նույնն են ասում, որ երբ գնում են տուն, չեն կարողանում հանգստանալ եւ, «երբ փակում ենք աչքերս՝ այդ մարդիկ հերթով երեւում են: Այն, ինչ տեսանք ու լսեցինք, մեծ «բագաժ» էր մեզ համար, ամբողջ կյանքի համար»:

Մարտի 20-ի դրությամբ դիմումների թիվը 5030-ից անցնում է, այդ դիմումները հանձնողների շրջապատում եմ, նաեւ ընդունողների: Ցանկանում եմ կողմնորոշվել ինքս, առանց տեսակավորողների: Ճնշող բառը մեղմ է ասված, մանավանդ որ ամեն ինչ աչքերի առջեւ է: Այստեղ գրում են, հուզվում են, պատմում են, սրտի մեջ են ընկնում, լացում, լիցքաթափվում են, զրուցում... Մի խոսքով՝ բոլոր այն անխուսափելի հոգեվիճակները, որոնց ենթարկվում են բյուրոկրատական մեքենայի զոհը, գրպանում դրամ չունեցող ծանր հիվանդը եւ նրա հարազատները, ուսման վարձը չվճարող ուսանողը, մասնագետը, որը տարիներով գործազուրկ է, դատաիրավական մարմիններից դժգոհ մարդը, որը հավատացած է, որ իր շահերը ոչ ոք չի պաշտպանում եւ այլն, եւ այլն... Շատ են միջին տարիքի կանայք, հույս փայփայող հայացքով, քանի որ աշխատանք են խնդրում: Բոլոր դիմումները համարակալվում են:

Զրուցում եմ Ալա Գածոեւայի հետ, որը Աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի բաժնի վարիչ է, արագ կարդում եւ տեսակավորում է բողոք-դիմումներն ըստ բնույթի:

Հիմնականում գերակշռում է սոցիալ-տնտեսական եւ իրավական բնագավառին ուղղված բողոքի ծայրը: Դիմումների եւ հայցվորների հոսքն աճում է աչքերիս առջեւ: Այստեղ աշխատողները հասարակական կարգով են ձեռնամուխ եղել մարդկանց օգնելու, դիմումներ հավաքելու, ուղարկելու շատ ծանր աշխատանքին:

Դիմողների միջին տարիքը 35-ից բարձր է: Աշխատանք են պահանջում հիմնականում կանայք, որոնց թվում քիչ չեն բարձրագույն կրթություն ունեցողները, գերակշռող են տեխնիկական ոլորտի գործազուրկ մասնագետները:

Մեծահասակների հոսքեր են, պահանջներ, խնդրանքներ՝ դեղորայք, բուժում, ատամների պրոտեզավորում: Կոմունալ ծախսերի դեմ անպաշտպան կանգնած մարդկանց հոգեվիճակների անսքող պատկերները ծանրանում են, իրոք, ծանրաբեռ ու բազմաշերտ դիմումներով, որոնց հեղինակները դիմում են օրինական դատի պահանջով, կրկնակի դատավարության խնդրանքով, դիմումին կցելով տեղեկանքներ ու փաստաթղթեր: Առանձին տեղ է զբաղեցնում, սառեցրած գումարներից զատ (խոսքը ավանդատուներին է վերաբերում), նաեւ ավանդների ինդեքսավորումը:

Դիմում են ազգային արժեքների պահպանության հարցով՝ հայցելով հանրապետության նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի օժանդակությունը, նշելով կոնկրետ փաստեր: Այդպիսին է Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտաշխատող Կարինե Ավագյանի դիմումը, որը տարիների փորձով տեղյակ է իր բնագավառում տիրող իրավիճակին:

Կան վիրավորանքի տողեր չինովնիկների կամայականություններից, որոնց հեղինակները նույնպես կանայք են, հիմնականում աշխատանքից հեռացված:

Առանց հոգեբանների նման ծառայությունը անհնար կլիներ: Սերգեյ Արզումանյան, մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնի վարիչ. «Տեսագրում ենք, հետո պտտվում է... մեր ուղեղներում», փոխաբերական իմաստով նկարագրում է իրենց աշխատանքն այս օրերին:

Այստեղ է աշխատում նաեւ նույն ինստիտուտի եւ նույն ամբիոնի դոցենտ Լուսիկ Քուրխչյանը, որը կարեւորում է նման օղակի նշանակությունը: Իսկ կենդանի օրինակներ՝ գալիս են նաեւ կոլեկտիվներով, որն արդեն խոսում է սոցիալական խմբերի մասին:

Այո՛, մարդը չպետք է մնա մենակ, իր հոգսերի հետ:

Հոգեբան Հրանտ Բազեյանը հատկապես նշում է կադրային քաղաքականության հետեւանքները փաստող օրինակներ, ավելացնելով, որ մասնագիտությունը մարդու անձի մի կարեւոր մասն է, ինտելեկտուալ մարդու դրամատիզմը երեւում է նաեւ այս օրերին այս տրահում: Շատ տղամարդիկ ադրուս են վստակում այլ ափերում, ընտանիքները մասնատված են՝ կանայք պահանջում են իրենց ամուսինների վերադարձը, երեխաները՝ իրենց հայրերի... Ահա մարտի 20-ին ստացված դիմումներից մի քանիսը.

ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանին
Մալաթիա-Սեբաստիա
թաղամասի բնակչուհի
Աննա Հարությունյան
Գ. Հաղթանակ 7 փ. 59 տուն

Դիմում եմ Ձեզ, որ ունեմ 2 երեխա, անչափահաս, ամուսինս գնացել է Ռուսաստան աշխատելու, որպեսզի փողով ապահովի մեզ, սակայն արդեն երկար ժամանակ գնացել է եւ մինչեւ այժմ չի վերադարձել: Պատճառը եւ հետեւանքները պարզ են: Տանը մնացել են ամուսնուս մայրը եւ ամուսնուս տատիկը: Ես աշխատունակ եմ: Խնդրում եմ ստեղծել այնպիսի հնարավորություններ, որպեսզի ամուսինս վերադառնա տուն եւ որքան հնարավոր է աշխատի եւ փող վաստակի այստեղ՝ Հայաստանում:

Դիմող Հայկ Ս. Առաքելյանից
Ավան 3/4 Չարենցի թաղամաս
տուն 17 բն. 7
հեռ. 61-57-96

Կինս II կարգի հաշմանդամ է, ես՝ III կարգի: Ապրում ենք մեկսենյականոց բնակարանում թոռակապող ծնողիս, անչափահաս 2 որդիներիս հետ: Ունեմ բարձրագույն կրթություն, ավարտել եմ պոլիտեխնիկ ինստիտուտի շինֆակը: Բոլորս էլ ապրում ենք առանց աշխատանքի: Խնդրում եմ որեւէ մեկին՝ հատկապես ինձ, ապահովել որեւէ աշխատանքով:

Դիմող «Հայգազարդ» պետական
կոնցեռնի հեղուկ գազի իրացման
դուստր ձեռնարկության
աշխատանքային կոլեկտիվից

Մեր ձեռնարկության աշխատակիցներն աջակցում են Ռոբերտ Քոչարյանի ընտրարշավին եւ ամենայն հաջողություններ են ցանկանում նրան:

Այսօր մեր կոլեկտիվի ծանր վիճակը ստիպում է մեզ դիմելու նրան հետեւյալ խնդրանքով՝ 1997 թ. հունիս ամսից մինչեւ այսօր աշխատել ենք առանց պարապուրդի, բայց աշխատավարձ չենք ստացել: Ադմինիստրացիան դա բացատրում է ձեռնարկության ունեցած զանազան պարտքերի առկայությամբ: Դիմել ենք տարբեր վերադաս մարմինների եւ ոչ մի արդյունքի չենք հասել: Կարծում ենք, կարիք չկա ներկայացնելու մեր 80 աշխատակիցների ընտանիքների ծանր դրությունը, որոնք 8 ամիս աշխատավարձ չեն ստանում:

Նշենք նաեւ, որ մեր աշխատավարձը ամենացածրն է «Հայգազարդ» պետական համակարգում, բանվորները ստանում են 8–10 հազար դրամ:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը լուծելու ծայրահեղ կարիքի մեջ հայտնված մեր աշխատակիցների օրինական պահանջը:

Ստորագրել է 32 մարդ:

ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանին
Մալաթիա-Սեբաստիա
թաղամասի բնակչուհի
Նարինե Սարգսյանից
Գ. Հաղթանակ 7 փ. 57 տուն

Դիմում եմ Ձեզ, որ ունեմ անչափահաս 2 երեխա, որոնց համար նպաստ չեմ ստանում, ամուսինս, որը չի աշխատում, բայց աշխատունակ է, անդամալույծ չէ: Ես նույնպես աշխատունակ եմ: Խնդրում եմ ուշադրության կենտրոնում պահել իմ դիմումը, քանի որ երեխաներս ինձանից հաց են ուզում եւ ես չեմ կարողանում տալ, իսկ հարեւաններս նույնպես իմ վիճակում են, որպեսզի պարտքով փող տան: Երեխային արդեն 2 ամիս է պատվաստումների չեմ տարել պոլիկլինիկա, որովհետեւ վճարովի է եւ տրանսպորտի փող չունեմ: Կներեք, որ մանրացնում եմ, որովհետեւ ստիպված եմ, քանի որ երեխաներիս խնդրանքները եւ խեղճ հայացքները ինձ վրա ազդում են:

ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Նավասարդ-Նովրուզը մուսուլմանական տոն չէ

Վերջին տարիներին համաշխարհային լրատվական միջոցները, դրանց շարքում, ցավոք, նաեւ հայկական լրատվամիջոցները Նավասարդ-Նովրուզի տոնը ներկայացնում են որպես «մուսուլմանական տոն», հաճախ նաեւ իբր «մուսուլմանական նոր տարի»: Միաժամանակ այս երկու սխալներով ներկայացվեց այս տոնը ճիշտ են, քան մենք հայերս եւ ընդհանրապես քրիստոնեությունն ընդունած արիացիները: Ճակատագրի ծաղրով քրիստոնյա արիացիները մոռացել են այս հնագույն տոնը: Արմատներից կտրվելու այս տխուր երեւույթի պատճառով հայկական կյանքում այս տոնն այսօր նշում են միայն «Արորդիների ուխտ» կրոնական համայնքի անդամներն ու հարգանքի է երկարել ոչ-արիական, քուրդ-թաթար-մոնղոլական Ադրբեջանը: Ալիեւի հրամանագրով արդեն մի քանի տարի է, ինչ մարտի 21-ը, Նովրուզ Բայրամ անունով, ընդգրկվել է պատմությունից զուրկ մեր հարեւանների պետական տոնացույցում, եւ ինքը Հեյդար Ալիեւը անձնապես մասնակցում է այդ տոնախմբություններին:



Մարտի 21-ի ծիսակատարությունը Գառնու տաճարում

Մոսկովյան ՀՌԲ հեռուստաընկերության մարտի 21-ի լրատվական հաղորդումներում: Նույն սխալները կրկնվեցին հայկական լրատվամիջոցներով: Բացառություն կազմեցին «Երկրապահ» թերթն ու հայկական հեռուստատեսության առաջին ծրագրի կիրակնօրյա «Բարեւ» հաղորդաշարը:

Մարտի 21-ը ոչ թե մուսուլմանական, այլ զուտ հնդեվրոպական-արիական տոն է: Այդ օրը արիական ժողովուրդները մեծ տոնախմբություններով նշել են գարնանամուտն ու տարեմուտը:

Մուսուլմանական տարեմուտը, ինչպես ողջ մուսուլմանական տոմարը, շարժական (լուսնային) է եւ համընկնում է իսլամի հիմնադիր Մոհամեդ մարգարեի Մեքքայից Մեդինա փախուստի (հիջրեթ) տարեդարձին լուսնային տոմարով: Հիջրեթը ոչ մի առնչություն չունի արիացիների եւ գարնանամուտի հետ: Շփոթի տեղիք է տալիս հավանաբար այն փաստը, որ Նովրուզը հանդիսավորապես նշում են Իրանում, զու մուսուլման ժողովուրդները: Իրանում, օրինակի համար, այն նշվում է ժողովրդական ու պետական մեծ հանդիսություններով նշանավորելով իրանական արեգակնային, ոչ մուսուլմանական պետական տոմարի տարեմուտը: Սրան հակառակ, առավելաբար արիական փուշտուներով բնակեցված Աֆղանստանի մեծ մասի նորօրյա տերերը՝ թալիբները, այս տարի արգելել են Նովրուզի նշումը՝ այն հայտարարելով ոչ մուսուլմանական, հեթանոսական տոն:

Ցավոք պիտի խոստովանել, որ Նովրուզի մեկնաբանության մեջ հետադիմական թալիբները ավելի մակիրները: Գառնիի տաճարում համապատասխան ծիսակատարությամբ մարտի 21-ին տոնվում է գարնանամուտը, այսինքն՝ հայ-արիական տարեմուտը եւ Վահագնի ծնունդը: Ցավոք, սակայն, ինչ-ինչ պատճառներով, «Արորդիների» այս տոնախմբությունը համարձակ առաջ չի գնում հայկական զանգվածային լրատվամիջոցներում...

Մինչ հայերն ու առհասարակ քրիստոնյա արիացիները համարյա ամբողջովին մոռացել են Նավասարդ-Նովրուզը, վերջինս տարուց տարի ավելի «մուսուլմանական» տոնի է վերածվում: Իսկ ջախջախիչ մեծամասնությամբ մուսուլման քրդերի, մասնավորաբար Թուրքիայի քրդերի համար Նովրուզը համարյա դարձել է ազգային տոն, որը տոնվում է մեծ շուքով եւ... քուրական ապահովական մարմինների հետ արյունալի ընդհարումներով:

Արիական ժողովուրդների այս տոնին վերջին տարիներին իր կեղտոտ եկեք տեր կանգնենք գարնանամուտի տոնին, Վահագնի ծննդի հրաշափառ տոնին, որպեսզի ծխանի ծուխն անպակաս լինի մեր օջախներից, որպեսզի նավասարդյան առավոտը միշտ ծագի մեր հայրենիքի վրա: Վերջ տանք մեր անտարբերությանը, ասենք՝ անվերջ շահագրգիռ խաչքար-խաչդաշների, նավասարդ-նովրուզների, Արցախ-Ղարաբաղների ողբերգությունները, պատմական կեղծարարությունն ու պատմաշինարարությունը...

Առաջարկում ենք Հայաստանի իշխանություններին, ապագա նախագահին, վերականգնել այս հայ-արիական տոնը, եւ, անկախ կրոնական համոզմունքներից, տոնել համազգային տարողությամբ, ինչպես դա արվում է մուսուլմանական Իրանում, Տաջիկստանում եւ... Ադրբեջանում:

Տեր կանգնենք մեր պատմությանը եւ ավանդույթներին: Ճանաչենք մենք մեզ: Վերադառնանք արմատներին:

ԳԵՎՈՐԳ ՅԱՔԲԱՅԱՆ

ՄՏ

Ապահովագրական ընկերությունները խարդախներին տարեկան 20 մլրդ դոլար են վճարում

Կալիֆորնիայում աղմկալի սկանդալ է ծագել: Որոյթեր գործակալության հաղորդման համաձայն ավտոմեքենաների ապահովագրման ամերիկյան խոշորագույն «Օլսթեյթ» ընկերությունը (որտեղ ապահովագրված են 20 մլն-ից ավելի մեքենաների տերեր) 107 մլն դոլարի դատական հայց է հարուցել Լոս Անջելեսի բնակիչ 45 բժիշկների ու փաստաբանների դեմ: Նրանք մեղադրվում են կանխամտածված ապահովագրական դեպքերի կազմակերպման նպատակով հանցավոր գործարքի մեջ մտնելու համար: Կազմակերպության անդամները սարքում էին ճանապարհատրանսպորտային պատահարներ: Առավել տարածված սխեման հետեւյալն էր. «մեղավորն» անսպասելիորեն անցնում է «Օլսթեյթում» ապահովագրված ավտոմեքենայի առջեւով եւ կտրուկ արգելակում: «Տուժած» վարորդը բժիշկների ցուցումով ձեւացնում է, թե վզի ողների եւ ողնաշարի լուրջ վնասվածք է ստացել: Դրա շնորհիվ ապահովագրական փոխհատուցման խոշոր գումարը կիսվում է ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների եւ կազմակերպիչների միջեւ:

«Օլսթեյթի» փաստաբանները պնդում են, որ իրենց տրամադրության տակ կան նման պատահարների 78 մասնակիցների զրավոր խոստովանությունները, նշում է «Ֆինանսովիե իզվեստիան»: Սա խարդախների դեմ «Օլսթեյթի» արդեն երկրորդ խոշոր դատական հայցն է: Անցյալ տարվա հունիսին ընկերությունը Նյու Ջերսիի նահանգում քրեական գործ էր հարուցել ավելի քան 700 մարդու դեմ նրանց մեղադրելով, որ 860 կանխամտածված ճանապարհատրանսպորտային պատահար են կազմակերպել ապահովագրական վճարումներ ստանալու համար:

«Օլսթեյթի» սկսած դատավարությունն արտացոլում է խարդախության դեմ ամերիկյան ապահովագրական ընկերությունների պայքարի ուժեղացման ընդհանուր միտումը: «Կոնինգ» ապահովագրական բրոքերային ֆիրմայի փորձագետների գնահատման համաձայն, ավտոմեքենաների տերերի կեղծիքների հետեւանքով վճարվող ապահովագրական գումարը տարեկան կազմում է 6,5 մլրդ դոլար: Եվս 2,7 մլրդի փոխհատուցում է վճարվում սարքված ճանապարհատրանսպորտային պատահարների «զոհերին»: Խարդախությունների մյուս ոլորտը արտադրական վնասվածքների ձեւացումն է, որոնք ապահովագրական հատվածի վրա նստում են տարեկան մոտ 5,7 մլրդ դոլար:

Նյու Յորքի ապահովագրական ծառայությունների կազմակերպության տվյալների համաձայն, կյանքի, կյանքի ապահովագրման, դժբախտ պատահարների եւ բուժապահովագրման ընտրիվ ամբողջ ԱՄՆ-ում խարդախներն ապահովագրողներից տարեկան շորթում են մինչեւ 20 մլրդ դոլար:

Մ. Ա.

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հրեա ղեկավարը արձագանքում է քուրական խեղաթյուրումներին

Ճանոթ հրապարակախոս Հարութ Սասունյանը այս հոդվածով անդրադառնում է Ամերիկացի հրեաների կոնգրեսի գործադիր տնօրեն Ֆիլ Բաումի՝ քուրական «Միլիեթ» թերթին տված հարցազրույցին, որտեղ ըստ քուրական մեջբերումների, նա իբր ասել է, թե իր կազմակերպությունը պաշտպանելու է քուրական շահերն Ամերիկայում ընդդեմ հայկական եւ հունական քարոզչության:

Երբ ես հարցրեցի պրն Բաումին, ընդունելով հանդերձ, որ իրոք քուրքամետ ակնարկներ արել է, նա կտրականապես ժխտեց իր ելույթում որեւէ հակահայկական արտահայտություն կատարած լինելու փաստը, գրում է Սասունյանը «Կալիֆորնիա կուրիեր» թերթի մարտի 19-ի իր մեկնաբանում:

Ես խնդրեցի, որ հարցերը պարզաբանելու նպատակով նա «Միլիեթին» հղեր մի նամակ, որտեղ թերթի ներկայացրած տարբերակին հակադիր հարցազրույցի ժամանակ իրոք արտահայտած իր մտքերը: Պրն Բաումը նույնքան մտահոգված լինելով այդ խեղաթյուրումների առնչությամբ, հանձն առավ գրել մի նամակ, որտեղ ժխտում է հայերի մասին որեւէ ակնարկություն կատարած լինելը քուրք լրագրողի հետ իր հարցազրույցի ընթացքում: Նա ավելացրեց, որ դա իր առաջին հարցազրույցն էր քուրական որեւէ թերթի եւ կարող է վերջինը լինել:

Տպագրված հարցազրույցի որոշ մասեր, որոնցից ինքը չի հրաժարվում, դեռեւս մնում են մեզ համար անընդունելի եւ անախորժ: Այնուամենայնիվ, ուրախ ենք, որ պրն Բաումը «Միլիեթի» կողմից իրեն վերագրված հակահայ արտահայտությունները միանգամայն ժխտում է: Ահա նրա նամակի ամբողջական տեքստը:

«Հարգելի պրն էմիրօղլու: Գնահատում եմ «Միլիեթի» էջերում իմ հարցազրույցի տպագրությունը: Պարտավոր եմ, սակայն, ուղղել հաղորդագրության այն հատվածները, որոնք ամբողջովին սխալ տպավորություն են թողնում ընթերցողների շրջանում: Ձեր գրածից այնպես է հասկացվում է, որ Ամերիկացի հրեաների կոնգրեսը «ամեն գնով» պաշտպանում է քուրական շահերը «ընդդեմ» հայ եւ հույն ժողովրդների շահերի: Սա պարզապես սխալ է: Մենք նշել ենք, որ անցյալում հավասարակշռությունը խախտված է եղել, եւ ցանկանում ենք, որ քուրական շահերը պաշտպանվեն նույն չափով, ինչ չափով պաշտպանվում են հունական շահերը: Մենք կարծում ենք, որ երկուսն էլ իրավունք ունեն ակնարկելու, որ իրենց տեսակետները արդարորեն եւ հավասար ուշադրության կարժանանան մեր կողմից:

Մեր պատկերացմամբ ոչ Միացյալ Նահանգները, ոչ էլ Իսրայելը կողմնակից չեն, որ տեսված անհամաձայնություններ լինեն Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ: Թուրքիայի եւ Հունաստանի շահերը կարող են պաշտպանվել Միացյալ Նահանգների կողմից: Երկուսն էլ դաշնակից են եւ ՆԱՏՕ-ի անդամ: Իմ ակնարկների էությունը միտված էր անցյալի խախտված հավասարակշռությունը շտկելուն, այնպես որ երկու կողմերն էլ ստանային հավասար ուշադրություն:

Մենք չենք պաշտպանում որեւէ գործունեություն, որն ուղղված լինի, ինչպես, ըստ երեւույթին, նշված է եղել Ձեր թերթում, տարածաշրջանի որեւէ երկրի իշխանությունների «դեմ», լինեն նրանք հույներ, քուրքեր թե հայեր: Դա չէ նպատակը: Ոչ էլ մեր խաղաղասիրությունը: Ես ուզում եմ նաեւ հիշեցնել Ձեզ, թե մեր խոսակցության ընթացքում հայերի մասին ընդհանրապես ոչ մի խոսք չի եղել: Մենք պարզապես ցանկանում ենք տարածաշրջանի բոլոր շահագրգիռ կողմերին վերաբերվել հավասար եւ արդար»:

Կոսովոյի ալբանացիներն ընտրեցին նախագահ եւ խորհրդարան

23 ՄԱՐՏ, «ԱԶՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»: Ալբանացիներով բնակեցված հարավսլավական Կոսովո նահանգում անցկացված ոչ պաշտոնական նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին մասնակցել է ընտրողների մոտ 85 տոկոսը, ինչը դիտորդների կարծիքով, հաստատում է այդ նահանգի բնակիչների անկախության հասնելու ձգտումը: Քվեարկության ընթացքում էական խախտումներ չեն արձանագրվել: Ըստ նախնական տվյալների, ձայների մեծամասնությունը ստացել է Իբրահիմ Ռուգովան, որը նախագահական ընտրություններում մրցակից չուներ: Սերբիայի իշխանությունները հայտարարել են, որ չեն ճանաչի ընտրությունների արդյունքները: Միեւնույն ժամանակ, Կոսովոյի մայրաքաղաք Պրիշտինայում Սերբիայի եւ Կոսովոյի իշխանությունների միջեւ համաձայնություն է ձեռք բերվել, որ ալբանացի աշակերտները եւ ուսանողները կվերադառնան կրթության պաշտոնական համակարգ: Վերջին տարիներին ալբանացիները զուգահեռ դպրոցներ ու բուհեր էին ստեղծել, քանի որ պաշտոնական հաստատություններում կրթությունն իրականացվում էր սերբերենով:

Մոլդովայում կոմունիստներն ամենաշատ տեղերը ստացան խորհրդարանում

23 ՄԱՐՏ, BBC: Մոլդովայում երեկ տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում կոմունիստական կուսակցությունը ստացել է ամենաշատ խորհրդարանական տեղեր: Պաշտոնական արդյունքները կհրապարակվեն մոտակա օրերին, սակայն բոլոր ձայները արդեն հաշվված են եւ, ինչպես հայտնում է ԻՏԱՌ–ՏԱՍՍ գործակալությունը, կոմունիստները ստացել են ընտրողների ձայների շուրջ 30 տոկոսը: Նախագահ Պետրու Լուչինսկու աջակցությունը վայելող ցենտրիստական դաշինքը հավաքել է 20 տոկոսից պակաս ձայներ: Կոմունիստները ստիպված կլինեն կոալիցիա կազմել, սակայն նրանց առաջնորդ Վլադիմիր Վորոնինը հայտարարեց, թե դա շատ դժվար կլինի, քանի որ խորհրդարանում ներկայացված են չափազանց հակադիր հայացքներ:

Կոֆի Անանը Մեծավոր Արեւելքում հաստատեց, որ արաբ առաջնորդները պատրաստ են խաղաղության

23 ՄԱՐՏ, RFI: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը այսօր ժամանեց Գազա: Նախօրեին նա այցելել էր Դամասկոս: Գազայում, Կոֆի Անանի այցի առիթով, տեղի ունեցան իսրայելյան բանտերում գտնվող պաղեստինցիների ազգականների ցույցեր: Ըստ որոշ տվյալների, այդպիսի բանտարկյալների թիվը 3 հազար է: Այսօր Կոֆի Անանը հանդիպելու է պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթի հետ: Արաբական «Ալ Հայաթ» թերթում հարցազրույց է հրապարակվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հետ, որում նա հաստատում է, որ արաբական առաջնորդները պատրաստ են խաղաղություն հաստատել Իսրայելի հետ: Ընդսմին, Կոֆի Անանը ընդգծում է, որ Մեծավոր Արեւելքում համընդհանուր խաղաղությունն անհնար է առանց Սիրիայի: Ինչպես հայտնի է, Սիրիայի եւ Լիբանանի դիրքորոշումը որոշվում է ՄԱԿ-ի 1978 թվականի բանաձեւով, որը պահանջում է իսրայելյան զորքերի անհապաղ դուրսբերումը Լիբանանի հարավում գտնվող գոտուց: Կոֆի Անանի հետ Դամասկոսում կայացած հանդիպման ժամանակ Սիրիայի նախագահ Ասադը թերահավատ վերաբերմունք ցուցաբերեց Իսրայելի վերջին առաջարկի կապակցությամբ: Իսրայելն առաջարկել էր Լիբանանից դուրս բերել իր զորքերը պայմանով, որ Իսրայելի հյուսիսային սահմանների անվտանգությունը երաշխավորվի: Մինչդեռ, ըստ Ֆրանսդրես գործակալության հաղորդագրության, Իսրայելի բանակը հայտնեց Լիբանանի հարավում գտնվող «Հզբոլլահի» դիրքերի վրա իսրայելական օդուժի հերթական հարձակման մասին. Հրթիռակոծվեցին Լիբանանի մայրաքաղաք Բեյրութից 50 կմ հարավ գտնվող օբյեկտները

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ողերշ Հայաստանի Հանրապետության ապագա նախագահին

Մեծարգո պարոն նախագահ.

Իրաւոյնս մեծ է մեր մտահոգությունը հայ մշակույթի արդի վիճակի նկատմամբ: Բոլորին եւ միանշանակորեն ակնհայտ է, որ եթե մեր մշակութային ասպարեզը շարունակի մնալ այսօրվա վիճակում, եթե կառավարությունը դարձյալ իր համալիր ուշադրությանը չարժանացնի արվեստի կարեւորագույն խնդիրներին եւ շրջանցի դրանց լուծումը, ապա Հայաստանում, անխուսափելիորեն, կստեղծվի հոգեւոր այնպիսի վակուում, որ հետագայում երկարատարիներ կպահանջվեն այն ինչ-որ կերպ լրացնելու համար:

Պարզորոշ է, որ ոգեղեն եւ հոգեւոր աղքատության մթնոլորտում հնարավոր չէ ստեղծել ոչինչ, ոչ արդար ժողովրդավարական հասարակություն, ոչ շահութաբեր տնտեսություն, ոչ առողջ, ուժեղ բանակ: Հայաստանը մշտապես հպարտացել է իր, դեպի հնության ակունքները տանող ավանդույթներով: Հայաստանը, սակայն, ստեղծել է նաեւ նոր ավանդույթներ: Եվ հենց այդ համադրությամբ դարավոր պատմության եւ վերջին տասնամյակների նորաստեղծ գեղարվեստական բարձր արժեքների առկայությամբ էր կերտվում 20-րդ դարի Հայաստանի ինքնատիպ նկարագիրը: Հոգեւոր Հայաստանի նկարագիր, որ նպաստեց միջազգային ակնածանքի եւ հետաքրքրությանը մեր երկրի հանդեպ:

Այսօր մեզ վտանգ է սպառնում կորցնել աշխարհում մեր ուրույն դեմքը: Անվերջ ցուցադրելով լոկ պատմական արժեքներ, այսօր հիրավի հեռու չենք գնա:

Հայոց մշակույթի նվիրյալներն արդի դժվարին պայմաններում էլ անում են ամեն հնարավորը, որ չմարի Արվեստի լույսը, որ հայ նկարիչների ցուցահանդեսներ բացվեն հայրենիքում եւ արտերկրում, որ հնչի հայ ժամանակակից կոմպոզիտորների երաժշտությունը, որ երիտասարդ տաղանդավոր կատարողները ստեղծագործական կանաչ ճանապարհ հարթեն իրենց համար, որ նկարահանվի գեթ մեկ կինոնկար... Սակայն այդ ծիգերի հաղթահարումը օրըստօրե դառնում է առավել դժվարին, գեղարվեստական ստեղծագործության անդաստանում պետության կողմից ասես միտումնավոր հարուցած նորանոր այլազան խոչընդոտների լծի տակ:

Մենք ցանկություն ենք հայտնում, որ դուք, մեծարգո պարոն նախագահ, քաջատեղյակ լինեք այն ամենին, ինչ տեղի է ունենում մեր մշակույթի ասպարեզում, ծանոթ լինեք նաեւ հանրապետությունում առկա ստեղծագործական կարող ներուժին: Այս դիտարկումից ելնելով, մենք պարտադիր անհրաժեշտություն ենք համարում հանրապետության նախագահին կից հատուկ Մշակույթի խորհրդի ստեղծումը: Խորհուրդ, որի անդամները ոչ թե նշանակվեն «վերեւից», այլ ընտրված լինեն արվեստագետ-մտավորականների կողմից:

Բացահայտ է, որ երկրի մշակութային կյանքում կարեւոր դեր է խաղում կադրային քաղաքականությունը: Ուստիեւ, ավելորդ չենք գտնում ասել, որ ղեկավարման հանգուցային դիրքերը պիտի գրավեն ոչնչով չվարկաբեկված, արժանապատիվ անձինք եւ բարձրորակ մասնագետներ:

Մենք հույս ենք հայտնում, մեծարգո պարոն նախագահ, որ դուք ի զորու կլինեք ընթացք տալ նաեւ այնպիսի հասունացած խնդիրների լուծմանը, ինչպիսիք են գեղարվեստական-ստեղծագործական կազմակերպություններից հարկ հանելը, մշակույթի, արվեստի օջախների պետական հովանավորության (դոտացիա) բարձրացումը, արվեստի աշխատողների այսօրվա նվազագույն աշխատավարձի շոշափելի բարձրացումը: Բացի այդ, անհրաժեշտ ենք գտնում, պետության հարկային քաղաքականության ծիրում մշակել գեղչի հնարավոր լծակներ, առավել հովանավորել արվեստին սատարող բարեգործական միջոցները:

Համոզված ենք, որ պետության քաղաքական հիմնադրույթներն առավել ցայտուն կերպով դրսեւորվում են առ մշակույթը տածած նրա դիրքորոշմամբ: Այդ են վկայում միջազգային բազում օրինակներ:

Փրկելով արվեստը, մենք փրկում ենք մեր ժողովուրդը, մեր ազգը:

Մեծարգո պարոն նախագահ, ակնկալում ենք Չեզանից վերոհիշյալ եւ բազում այլ վաղուց ի վեր հրատապ դարձած խնդիրների լուծումը, ի փառս հայ ժողովրդի, Հայաստանի մշակույթի եւ արվեստի բարգավաճման:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ

ԵՐԵՎԱՆ

«Փարոս»-ի ոգու երգը

Երգչախմբի անդրանիկ հոբելյանը

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացած շաբաթօրյա համերգը սովորականների շարքին չէիր դասի: Թեկուզ այնքանով, որ այն հոբելյանական էր եւ նվիրված էր «Փարոս» կամերային երգչախմբի ստեղծման հնգամյակին: Այն սովորական չէր նաեւ երգչախմբի անդամների կազմով, որոնց մեծ մասը արցախյան ազատամարտից վիրավոր եւ 1988-ի երկրաշարժից հաշմված հայ տղաներ ու աղջիկներ են: Համախմբվելով նորին մեծություն երգի շուրջ եւ հնչեցնելով իրենց ոգու ձայնը՝ դրանով նրանք կարծես ձեռնոց են նետում անողոք ծակատաղին եւ վերահաստատում կյանքի ու հարատեւության խորհուրդը: Խմբավար-մանկավարժ Վաչագան Նավասարդյանի համառ ջանքերի եւ միջազգային հեռվնասվածային վերականգնողական կենտրոնի (տնօրեն՝ Մխիթար Մնացականյան) ու Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի (Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Վիգեն եպս. Այվազյան) հովանավորության արդյունքում այսօր ունենք երգչախումբ, որը հանդես է եկել նաեւ այլ օտար բեմերում՝ ցուցադրելով հայի մեր տեսակի ադրելու կամքն ու գոյատեւման անսասան ոգին: Անցած տարի հանդես գալով Բեյրութում՝ «Փարոս»-ը շատերին հիացրեց իր ներքին բերմությամբ եւ հոյս, եկմալյան, Շուբերտ, Կաչինի, Վերդի, հայկական ժողովրդական երգեր՝ Թարուլ Ալթունյանի մշակմամբ: Ուրախալին այն էր, որ ֆրանսիական եւ իտալական ժողովրդական երգերը հնչեցին բնագրերով եւ վարժ կատարմամբ: Կարելի էր, անշուշտ, գնալ դյուրին ճանապարհով՝ ընտրելով եւ կատարելով հանրամատչելի ու հետաքրքրալի երգեր: Ընտրվեց, սակայն, դասական երգացանկ՝ ազնվացնելով թե՛ կատարողի, թե՛ ունկնդրի հոգին: Հոբելյանական այս համերգի հաջողությունը վկայեց նաեւ այն իրողությունը, որ նման ելույթները պետք են ոչ միայն ու ոչ այնքան իրենց՝ ելույթ ունեցողներին, որքան մեզ, բոլորիս:

ՄԱՐԻԱՆՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Եկա՛ մեկ ցուցահանդես՝ բարեկամության նախահիմք

Հայ ուսանողների գեղանկարները ցուցադրվեցին Գերմանիայում

Վերջերս Երեւանի տարբեր բուհերի (հիմնականում գեղարվեստի ինստիտուտի) մի խումբ ուսանողներ մեկնեցին Գերմանիա: Երեքշաբթյա ուղեւորությունից նրանք նոր էին վերադարձել, երբ ուսանողական ջոկատների կամավորական աշխատանքի հանրապետական շաբաթը շնորհակալական նամակ եւ նոր հրավեր ստացավ: Ուսանողական ջոկատի ղեկավարն էր Երեւանի գեղարվեստի ինստիտուտի դասախոս, Հայաստանի Թեթեյան մշակութային միության վարչության վարիչ-քարտուղար Սերգեյ Գալստյանը:

– Պարոն Գալստյան, ո՞րն էր ձեր ուղեւորության նպատակը:

– Երեւանում գործում է ուսանողական ջոկատների կամավորական աշխատանքի հանրապետական շաբաթը: Իմանալով նրանց գործունեության մասին, ես առաջարկեցի ձեռնարկել մի ուղեւորություն, որին մասնակցեն հիմնականում նկարիչ ուսանողներ, եւ որի արդյունքում կարելի էր կազմակերպել ուսանողական աշխատանքների ցուցահանդես: Շնորհի պես Ստեփան Ստեփանյանի միջամտությամբ Գերմանիայից համապատասխան երկու կազմակերպություններ անմիջապես արձագանքեցին: Մենք ընդունեցինք Մոնտե Գրիստոֆ ճամբարի հրավերը: Մեզ գրավեց նրանց առաջարկը, պետք է ձեւավորեինք երիտասարդական սրճարանը եւ բացեինք երկու ցուցահանդես:

– Ինչպե՞ս կատարեցիք ուսանողների ընտրությունը:

– Գեղարվեստի ինստիտուտում ուսանողների ընտրություն կատարելն ինձ համար դժվար չէր: Շատերին ճանաչում եմ, շատերին դասավանդում: Խմբում ընդգրկվեցին ուսանողներ նաեւ պետհամալսարանից եւ մանկավարժական ինստիտուտից, ընդհանուր թվով 12 հոգի:

– Ինչպե՞ս ձեզ հաջողվեց բավարարել խստապահանջ գերմանացիների ճաշակը եւ համակրանք ստեղծել, քանի որ ձեր վերադարձից հետո անմիջապես ստացվել է շնորհակալական նամակ:

– Ճիշտ է, մենք չձեւավորեցինք սրճարանը, քանի որ չէին ավարտվել շինարարական աշխատանքները, սակայն ճամբարի ղեկավարության առաջարկով մեր խումբը պատրաստեց ձեւավորման, կահավորման մանրակերտը, նկարվեցին շուրջ տասը եւ ստեղծվեցին ավելի քան երկու տասնյակ կերամիկական աշխատանքներ, որոնք պետք է զարդարեն երիտասարդական սրճարանը: Այս գործում թեեւ մասնակցություն ունեցավ ամբողջ խումբը, բայց եւ այնպես ուզում եմ առանձնացնել Ալեքսանդր Մանուկյանի, Զառա Գասպարյանի, Արմեն Հովեսյանի, Ռուբեն Խաչատրյանի, Տիգրան Չիթողցյանի, Կարեն Դայանի եւ Արշակ Բաղդասարյանի ակտիվ ջանքերն ու ստեղծագործական նախաձեռնությունները: Այս ուսանողների հետ կարելի է հաղթահարել ամենաբարդ ու դժվարին առաջադրանքը եւ բավարարել խստագույն ճաշակների:

– Հաջողվա՞ծ եք համարում ձեր ցուցահանդեսը:

– Հայտնի է, որ ցուցահանդեսի հաջողությունը չափվում է նաեւ այն բանով, թե որքան նկարներ են վաճառվել: Իսկ նկար վաճառվել է, ավելի ճիշտ վաճառվել են...

Առաջին ցուցահանդեսը կազմակերպեցինք Գրիստոֆ գյուղում, որը պատկանում է Միդլենբուրգ մարզին եւ գտնվում է Գերմանիայի հյուսիսային մասը: Գրիստոֆ գյուղը չափազանց գեղեցիկ մի վայր է, որն ընկած է Բալթիկ ծովի ափին: Եվ ինչպես խոստովանեցին ճամբարի ղեկավարները, նրանք չէին սպասում նման արժեքավոր ցուցահանդեսի, այլապես գովազդը լավ կկազմակերպեին: Այս ցուցահանդեսին մասնակցեց գրեթե ողջ գյուղը, նաեւ այցելուներ ունեցանք մոտակա Գրեյֆսվալդ քաղաքից: Այստեղ հաջողություն ունեցավ Տիգրան Չիթողցյանը, նրա արվեստը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Երկրորդ ցուցահանդեսը բացեցինք Ռոստոկ քաղաքում: Այստեղ հեռուստատեսությամբ գովազդը տվել էր իր պտուղները, վաճառվեց մեր ուսանողների ավելի քան 16 աշխատանք:

– Հյուսիսային Գերմանիան որքանո՞վ էր ճանաչում Հայաստանը եւ հայ արվեստը:

– Իհարկե, նրանք տեղյակ էին Հայաստանի քաղաքական եւ տնտեսական իրավիճակին եւ առաջին անգամ չէր, որ ծանոթանում էին հայ գեղանկարչությանը: Այս ցուցահանդեսն էլ ուսանողների համար ինքնանպատակ չէր: Առաջին հերթին սա Հայաստանի ճանաչումն էր: Երբեմն էլ անտեղի չէ հնարավորության դեպքում Հայաստանը ներկայացնել համաշխարհային հանրությանը, թեկուզ հայ մշակույթով եւ արվեստով: Ամեն ուղեւորությունից չէ, որ մեծ բարեկամություն է ծնվում: Այս պարագայում, որտեղ խոսվում է գույների լեզվով, որտեղ գեղեցիկը սահմաններ չի ճանաչում, մարդիկ արագ են հասկանում իրար անկախ սեռից ու տարիքից: Մենք վերադարձանք, համոզված, որ մի երկրում լավ բարեկամներ ունենք:

ԱԼԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄՆ, ՕՍԿԱՐ-98

«Տիտանիկ»-ի հաղթարշավը

Ինչպես եւ սպասվում էր, «Տիտանիկ» ֆիլմը հեղափոխություն է առաջացրել Հոլիվուդում: Երկուշաբթի օրը Ամերիկայում կայացած Օսկար 1998-ի մրցանակաբաշխության արդյունքների մանրամասները թողնելով մեր առաջիկա համարներից մեկին, նշենք, որ 200 միլիոն արժողությամբ «Տիտանիկ»-ը դառնում է առաջին ֆիլմը, որի եկամուտը ցուցադրումից մի քանի ամիս անց կգերազանցի մեկ միլիարդ դոլարը: Այս սահմանագծին ամենամոտը մինչեւ օրս կանգնած էր Սփիլբերգի «Յուրայի ժամանակաշրջանի արգելոցը» ֆիլմը:

«Տիտանիկ»-ի շուրջ իսկական խելացնորություն է սկսվել: Ըստ «Նյուզուիք» ամերիկյան շաբաթաթերթի տվյալների՝ ֆիլմը ամենասիրվածն է Սլովենիայում, երբեւէ ցուցադրված ամենահաջողը՝ Մեխիկայում եւ Հոնկոնգում: Ֆրանսիայի որոշ քաղաքների կինոթատրոնների ներկայացրած վիճակագրության համաձայն իրենց այցելուների թիվը գերազանցում է տվյալ քաղաքի բնակչության թիվը, ինչը կարող է միայն մեկ բան նշանակել: Ֆրանսիացիները, որ նախկինում երբեք չեն վարվել նման ձեւով, այժմ «Տիտանիկ»-ը դիտում են երեքից չորս անգամ: Սովորաբար կինոթատրոն հաճախող հանդիսատեսի ընդամենը երկու տոկոսն է նույն ֆիլմը երկրորդ անգամ դիտում: «Տիտանիկ»-ի դեպքում այդ թիվը հասել է 20 տոկոսի: Դեպքեր կան, երբ ֆիլմը դիտել են յոթերորդ անգամ:

Միայն Միացյալ Նահանգներում, բողարկումից 58 օր անց ֆիլմն արդեն բերել է 350 միլիոն դոլար շահույթ, այն դեպքում, երբ, համեմատության կարգով, «Յուրայի ժամանակաշրջանի արգելոցը» վաթսունյոթ օրում հավաքել է 300 մլն դոլար: Այդ թիվը զարմանալի է դառնում, եթե հաշվի առնենք, որ «Տիտանիկ»-ը տեւում է երեք ժամ 15 րոպե, այսինքն կինոթատրոնները կարող են օրական ընդամենը երեք սեանս ցուցադրել: Մեկ այլ փաստ, Ինտերնետում ֆիլմի «ուեբսայթ» է մտել օրական 4 մլն մարդ:

«Տիտանիկ»-ը ունի Օսկարի 14 թեկնածություն, որից, նախնական տվյալներով, արդեն ստացել է 8-ը: Նման դեպքը հազվադեպ է Օսկարի պատմության մեջ: 1939 թվին «Քամուց քշվածներն» էր, ըստ Նյուզուիքի, շահել 8 մրցանակ 13-ից, իսկ 1953-ին «Այստեղից հավերժություն» ֆիլմը՝ նույնքան առաջադրություններից նույնքան մրցանակ: 1994-ին՝ «Ֆորեսթ Գամպը»՝ 13 թեկնածությունից 6 մրցանակ:

Սպասենք մրցանակաբաշխության մանրամասնություններին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՄՕԿ

Հանդիպում Լոզանում

Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչի հրավերով մարտի 19-20-ը Շվեյցարիայի Լոզան քաղաքում, ՄՕԿ-ի շտաբ-բնակարանում տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցեցին նախկին խորհրդային հանրապետությունների ազգային օլիմպիական կոմիտեների նախագահներն ու գլխավոր քարտուղարները:

Առաջին օրը ՄՕԿ-ի նախագահն առանձնազրույցներ ունեցավ ՄՕԿ-ի դասվիրակությունների ղեկավարների հետ: Սամարանչը նախ ընդունեց Հայաստանի ներկայացուցիչներին: ՀԱՕԿ-ի նախագահ Ալեքսան Ավետիսյանին եւ գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանին: Առանձնազրույցը, նախատեսված 15-ի փոխարեն, 45 րոպե տեւեց: Սամարանչը հետաքրքրվեց Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակով, հանրապետությունում սպորտի ներկայիս վիճակով: ՄՕԿ-ի նախագահին հետաքրքրող հարցերի մասին խոսեց դրն Ավետիսյանը: Նա ներկայացրեց նաեւ այն ուղիները, որոնց միջոցով մտադիր են դուրս գալ ոչ պարզ իրադրությունից: Սամարանչը խոստացավ, որ առաջիկայում ՄՕԿ-ի ներկայացուցիչը կայցելի Հայաստան, կծանոթանա հանրապետության օլիմպիական մարզաբազային, եւ նրա եզրակացությունից հետո ՄՕԿ-ը, հնարավոր է, նյութական օգնություն ցույց կտա շինարարական-վերանորոգման աշխատանքներին: Սամարանչը նաեւ հավատացրեց, որ ՄՕԿ-ը նաեւ կաջակցի երեւանում օլիմպիական թանգարանի ստեղծելուն:

Հաջորդ օրը տեղի ունեցավ ընդլայնված խորհրդակցություն, որին մասնակցեցին հանրապետությունների ներկայացուցիչները, ՄՕԿ-ի բոլոր դասախանատու աշխատողները, ինչպես նաեւ Եվրոպական օլիմպիական կոմիտեի նախագահ Ժակ Ռոգը: Խուան Անտոնիո Սամարանչն իր ելույթում ներկայացրեց ՄՕԿ-ի աշխատանքները, վերջին տարիներին ունեցած հաջողությունները: Նա նշեց, որ այսօր բավականին բարձր է Միջազգային օլիմպիական կոմիտեի հեղինակությունը, եւ այս է դասճառը, որ բոլոր մարզական կազմակերպությունները ցանկանում են դառնալ ՄՕԿ-ի անդամ: Շատ ֆեդերացիաներ ներկայումս ցանկություն ունեն ընդգրկվելու ՄՕԿ-ի կազմում եւ մասնակցել օլիմպիական խաղերին: Սամարանչը նաեւ ավելացրեց, որ իր կողմից աշխատանք է տարվում ՄՕԿ-ի հաջորդ նախագահի թեկնածուի դասրասման ուղղությամբ: Նա ներկաներին դասմեց Միջազգային օլիմպրակաս կոմիտեի ասեսորյա լարված աշխատանքի մասին: Այն հատկապես արդյունավետ է եղել ՄՕԿ-ում մարկետինգի բաժնի ստեղծումից հետո, որի շնորհիվ ամեն տարի ավելանում են միջազգային ֆեդերացիաներին եւ ՄՕԿ-ներին որոնց օգնություն հատկացվող գումարները: Առաջիկայում ՄՕԿ-ի աջակցությամբ կանցկացվի մարկետինգի վերաբերյալ ռեգիոնալ սեմինար-խորհրդակցություն: Սակայն, նշեց Սամարանչը, ինչքան էլ որ ՄՕԿ-ն օգնի, դեռ է տեղերում նոր միջոցներ գտնել, զարգացնել մարկետինգը:

Հանդիպման ժամանակ ելույթ ունեցավ նաեւ ՄՕԿ-ի տնօրեն Կարարը: Նա շնորհակալություն հայտնեց նախկին խորհրդային հանրապետությունների ՄՕԿ-ներին, որ նրանք թիմեր են ներկայացնում օլիմպիական խաղերում եւ նույնիսկ չեմպիոններ դասրասում: Նա ասաց, որ տեղերում դեռ է բարձրացնել ազգային օլիմպիական կոմիտեների դերը: Տնօրենը կարեւորեց կառավարություն-ՄՕԿ կապը, նաեւ ավելացնելով, որ յուրաքանչյուր երկրի սպորտի մասին օրենքում դեռ է տեղ գտնի ՄՕԿ-ին նվիրված հատուկ բաժին: Կարարը նշեց նաեւ, որ ՄՕԿ-ների աշխատողները դեռ է լինեն պրոֆեսիոնալներ, բարձրակարգ մասնագետներ: Ասաց, որ ՄՕԿ-ը խրախուսում է կանանց եւ երիտասարդների մուտը օլիմպիական շարժում:

Լոզանում անցկացված հանդիպումը նշանակալից էր նրանով, որ փաստորեն առաջին անգամ ՄՕԿ-ների ներկայացուցիչները ավելի մոտիկից ծանոթացան միջազգային օլիմպիական կոմիտեի կառուցվածքին, գործելակերպին: Եվ, իհարկե, այս հանդիպումը շատ օգտակար եղավ տեղերում հետագա աշխատանքները ճիշտ կազմակերպելու գործում:

Հանդիպման մասնակիցները ունեին բազմաթիվ կուտակված հարցեր, որոնց բոլորի դասասխանները ստացան:



ԹԵՆԻՍ

Խոշոր մրցաշար Կի Բիսքեյնում

Ամերիկյան Կի Բիսքեյն քաղաքում անցկացվում են խոշոր մրցումներ, որոնք Լիպտոնի առաջնություն անունն են կրում: Միաժամանակ տղամարդկանց եւ կանանց մրցաշարեր են ընթանում: Չափազանց բարձր է մրցանակային ընդհանուր հիմնադրամը՝ 4 մլն 600 հազար դոլար:

Վենուս Վիլյամս

Կանանց մրցաշարում արդեն հայտնի են դարձել քառորդ եզրափակիչի 8 մասնակիցներից 7-ը: Նրանց թվում է Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա), որը նախորդ փուլում 6-3, 5-7, 6-2 հաշվով առավելության հասավ ֆրանսուհի Սանդրին Տեսյուի նկատմամբ: Այժմ աշխարհի թիվ 1 ռակետ Մարտինան դեռ է հանդիպի 16-ամյա Սանդրա Վիլյամսի (ԱՄՆ) հետ: Քառորդ եզրափակիչ է մտել նաեւ Սանդրայի ավագ քույրը՝ Վենուսը (նա 17 տարեկան է): Նրան ավելի հետաքրքրել Սոֆի Ֆարինան (Ֆրանսիա): Երրորդ զույգը կկազմեն Արանտա Սանչես-Վիկարիոն (Իսպանիա) եւ Յանա Նովոտնան (Չեխիա): Քառորդ եզրափակիչ դուրս եկած ամերիկուհի Լինդսեյ Դեւենպորտն այժմ սպասում է իր մրցակցուհուն: Դա կորոսվի Կոնչիտա Մարտինես (Իսպանիա)-Աննա Կուրնիկովա (Ռուսաստան) խաղից հետո: Ի դեմ, դեռատի Կուրնիկովան իր վերջին հանդիպումը հիանալի անցկացրեց 7-5, 6-4 հաշվով դարձության մասնելով նշանավոր Մոնիկա Սելեսին (ԱՄՆ):

Եթե կանանց մրցաշարում ամեն ինչ համեմատաբար հանգիստ է ընթանում, նույնը չի կարելի ասել տղամարդկանց մրցաշարի մասին: Արդեն մի շարք անակնկալներ են գրանցվել: Դրանցից գլխավորը, իհարկե, աշխարհի թիվ 1 ռակետ, ամերիկացի Փիթ Սամփրասի դարտությունն է Ուեյն Ֆերեյրայից (ՀԱՀ): Հետաքրքիր է, որ Սամփրասն առաջին խաղափուլը շահեց «չոր» 6-0 հաշվով, բայց հետո սկսեց հաճախ սխալվել եւ հաջորդ երկուսում զիջեց 6-7, 3-6 հաշվով: Այժմ լավագույնների ցուցակում Սամփրասին փոխարինել կարող է չեխ Պետր Կորդան (նա վերջին խաղում հաղթեց իսպանացի Ֆրանսիսկո Կլավետային): Մրցաշարի անակնկալներից նշենք նաեւ ռեյտինգ ցուցակում 7-րդ հորիզոնականում գտնվող շվեդ Յոնաս Բյորկմանի դարտությունը գերմանացի Նիկլաս Կիեֆերից՝ 6-7, 6-7 հաշվով:

Կի Բիսքեյնում հիանալի խաղ է ցուցադրում Անդրե Աղասին: Նա մրցաշարի երրորդ շրջանում 6-4, 7-5 հաշվով դարտության մատնեց ԱՄՆ-ի մեկ այլ ներկայացուցչի Վինսենս Սփեյդիին: Հետաքրքիր է, որ վերջերս Ինդիան Ուելսի մրցումների քառորդ եզրափակիչում Աղասին «ներգացնող» Ժան-Միշել Գեմբիլն այստեղ առաջին իսկ խաղում դարտություն կրեց: 20-ամյա ամերիկացի թենիսիստին հաղթեց Մարկ Վուդֆորդը (Ավստրալիա):

Պայքարը շարունակողների թվում են Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան), Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա), Գրեգ Ռուսեդսկին (Անգլիա):

ԵՐԵՎԱՆ

Վարչապետը շնորհավորում է շախմատիստներին

Հայաստանի շախմատային ֆեդերացիային.

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ մեզ բոլորիս Հայաստանի շախմատիստների մարզական նոր նվաճման առթիվ:

Նյու Յորքում անցկացված խոշորագույն միջազգային մրցաշարում հայ գրոսմայստերները հասան գերազանց մարզական արդյունքի՝ առաջ անցնելով բոլոր հռչակավոր մրցակիցներից եւ ամբողջովին գրաղեցնելով հաղթողների դասվանդակը:

Ես հդարս եմ մեր մարզիկների այս փայլուն հաջողության համար:

Սա մեկ անգամ եւս հաստատում է մեր երկրի շախմատային համբավը եւ հեղինակությունը:

Մաղթում եմ մարզական նորանոր հաղթանակներ եւ անկոտրում կամք:

Ռ. ԲՈՅԱՐՅԱՆ

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ

Համեստ արդյունքներ

Տալլինում անցկացված օդամղիչ զենքի հրաձգության եվրոդայի առաջնությունից վերադարձան Հրայր Պետիկյանը, Եփրեմ Ավագյանը եւ Ռոբերտ Ոսկանյանը:

Սակայն ասենք, որ եվրոդական սուդաստեսից առաջ մեր հրաձիգները Լվովում մասնակցեցին Ուկրաինայի հավաքականի հետ համատեղ հավաքին: Այդ ընթացքում նրանք հանդես եկան նաեւ Ուկրաինայի բաց առաջնությունում: Այս մրցումներին, բացի տանտերերից եւ մեր մարզիկներից, մասնակցեցին նաեւ Ռուսաստանի, Հոլանդիայի, Նորվեգիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչներ, ընդհանուր առմամբ՝ 300 հրաձիգներ: Այստեղ Պետիկյանը 3-րդ մրցանակակիր դարձավ, իսկ Եփրեմյանը գրավեց 5-րդ տեղը:

Եվրոդայի առաջնությունում սպասելիներ կային մեր մարզիկներից եւ, առաջին հերթին, օլիմպիական չեմպիոն Հրայր Պետիկյանից: Սակայն նա օդամղիչ հրացանի մրցումներում բաժանեց 14-17-րդ տեղերը (մրցաձեւում հանդես եկան 64 հրաձիգներ): Օդամղիչ զենքի ատրճանակի մրցումներում 48 մարզիկների մրցաղայքարում Ավագյանը գրավեց 12-րդ, իսկ Ոսկանյանը՝ 21-րդ տեղը:

Տալլինյան մրցումներն աշխարհի առաջնության նախաղատրաստական առաջին փուլ հանդիսացան (այն կանցկացվի Իսպանիայի Բարսելոն քաղաքում, հուլիս ամսին): Եվրոդական սուդաստեսը մեր հրաձիգների համար կարեւորվեց նրանով, որ, չնայած համեստ արդյունքներին, երեքն էլ աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեցին՝ լրացնելով ՄՕԿ-ի կողմից սահմանված դահանջները:

ԼՈՒՐԵՐ

Հանրապետական առաջնությունը

Երեկ Ալբերտ Ազարյանի ղեկավարած մարմնամարզության մասնագիտացված մարզադդրոցում տեղի ունեցավ սպորտային մարմնամարզության Հայաստանի առաջնության բացումը: Հենց այդ մարզադդրոցի դահլիճում, ամեն օր ժամը 11-ից, կմրցեն տղամարդիկ: Կանայք իրենց մրցաղայքարը կանցկացնեն Հրանտ Շահինյանի անվան մարզադդրոցում, այսօրվանից: Նրանց մրցումները կսկսվեն ժամը 12:30-ին: Հանրապետության չեմպիոններն ու չեմպիոնուհիները հայտնի կդառնան ուրբաթ օրը՝ մարտի 27-ին:

Հինգ թիմերի մասնակցությամբ

Երեւանի Դավիթ Համբարձումյանի անվան լողավազանում անցկացվեց ջրագնդակի հանրապետական առաջնությունը, որին 5 թիմեր մասնակցեցին: Հաղթանակ տանելով բոլոր 4 խաղերում՝ Հայաստանի չեմպիոնի կոչումը նվաճեց «Նեֆտուն-Ի» թիմը: Երկրորդ տեղը գրավեց Արաբկիրի համայնքի ջրային մարզաձեւերի մասնագիտացված մարզադդրոցի I թիմը, իսկ երրորդ մրցանակակիր դարձավ «Նեֆտուն-II»-ը:

Կմրցեն երիտասարդները

Մարտի 26-30-ը Վանաձորում կանցկացվի ծանրամարտի հանրապետական երիտասարդական առաջնությունը: Ըստ նախնական տվյալների, ներկայացված հայտերում նշված են 110 մարզիկների անուններ: Վանաձորյան մրցումների արդյունքներով կկազմվի Հայաստանի հավաքականը, որը կմասնակցի մայիսի 17-26-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում անցկացվելիք աշխարհի երիտասարդական առաջնությանը:

Առաջնության երկրորդ տուրը

Այսօր տեղի կունենան ֆուտբոլի Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի երկրորդ տուրի խաղերը: Կենտրոնական հանդիպումը, անշուշտ, հանրապետության չեմպիոն «Երեւանի» եւ երկրորդ մրցանակակիր «Շիրակի» հանդիպումն է (այն կանցկացվի Երեւանի «Նաիրիտ» մարզադաշտում): Մյուս զույգերն այսպիսին են՝ «Շիրակ-2»-«Արարատ», «Դվին»-«Էրեբունի-ՀՄՄ», «Կոտայք»-«Ցեմենտ», «Դարաբաղ»-«Փյունիկ»:

Այսօր Շտուտգարտում ընկերական մրցախաղ կանցկացնեն Գերմանիայի եւ Բրազիլիայի ֆուտբոլային հավաքականները: Երկու թիմերն էլ ամենայն լրջությամբ են նախապատրաստվել հանդիպմանը:

Նկարում (Ձախից) Գերմանիայի հավաքականի խաղացողներ Միխայել Տարնատը, Յուրգեն Բլինդմանը, Յուրգեն Կոլերը, Յենս Նովոտնին եւ Քրիստիան Վոերնը մարզումների ժամանակ

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքով

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»

Շուտով առաջին արեւմտյան ինքնաթիռը

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: «Հայկական ավիաուղիներ» (ՀԱՈՒ) ավիաընկերությունը շուտով կսկսի շահագործել արեւմտյան արտադրության առաջին օդանավը: Դա եվրոպական հանրահայտ «Airbus Industries» օդանավաշինական ընկերության A310 մակնիշի օդանավն է:

Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեց «Հայկական ավիաուղիների» գործադիր տնօրեն Տիգրան Աչոյանը, «էրբաս» կոնսորցիումը այդ օդանավը ՀԱՈՒ-ին է տրամադրելու լիզինգով (վարձակալությամբ): Վերջերս երկու ընկերությունների միջեւ կնքված պայմանագրի համաձայն: Պայմանագիրը կնքվել է մոտ մեկ տարի տեւած բանակցությունների արդյունքում:

Ըստ պրն. Աչոյանի, A310 օդանավը, որն ունի իրական հարմարավետություն եւ արդյունավետ բեռնային հնարավորություններ, աշխարհի ամենաշահութաբեր օդանավերից մեկն է: Այն մտնում է աշխարհի ամենալավ վաճառվող երկշարժիչ, լայնիրան լայներների (օդանավերի) A300 սերիայի «ընտանիքի» մեջ: Ներկայումս «Հայկական ավիաուղիները» շահագործում է միայն խորհրդային արտադրության օդանավեր, որոնք ունեն մոտավորապես ցածր շահութաբերություն, ինչպես նաեւ աղմուկի այնպիսի մակարդակ, որը կարող է հանգեցնել եվրոպական օդանավակայաններ դրանց մուտքի արգելմանը: Մեկ A310-ը հնարավորություն կտա ՀԱՈՒ-ին փոխարինելու ընթացիկ շարժակազմի երեք կամ չորս օդանավեր վառելիքի խնայողությունը հասցնելով 35 տոկոսի:

Ըստ Տ. Աչոյանի, օդանավի ձեռքբերումը ՀԱՈՒ-ի արդիականացման եւ ընդլայնման ծրագրի կարեւոր քայլերից մեկն է: Նախատեսված է մինչեւ 2005 թ. ավիաընկերության շարժակազմում «Airbus Industries»-ի արտադրության օդանավերի թիվը հասցնել 10-ի:

«Airbus Industries»-ի հաղորդագրության համաձայն, ներկայումս ԱՊՀ երկրներում շահագործվում են A310 տիպի 12 ինքնաթիռներ, եւ նախատեսված է 1998 թ. վերջում դրանց թիվը հասցնել 20-ի: Մինչեւ օրս «էրբաս»-ի արտադրած 1700 օդանավեր են առավել աշխարհի 140 շահագործողների:

Բաքուն հուսով է, որ արեւմտյան ներդրումները կօգնեն վերաշինանալու Ղարաբաղին

ԲԱՔՈՒ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Զ. Նեգելեն ղարաբաղյան հակամարտությանը նվիրված հոդված է նախատպագրել: Հոդվածում ասվում է, որ [illegible] բային զտումից, պատերազմից, ռազմական օկուպացումից, զանգվածային գաղթերից եւ հաշտության անվերջանալի բազմաթիվ բանակցություններից հետո Ադրբեջանի առջեւ շարունակում են ծառացած մնալ նախկին ինքնավար ԼՂՀ-ի կարգավիճակի սահմանման եւ գրավյալ հողերի վերադարձման խնդիրները: Ներկայումս ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում ղարաբաղյան հակամարտության շուրջ անցկացվող հաշտության բանակցությունները փակուղի են մտել: Այժմ Ադրբեջանի արտգործնախարարի պաշտոնն զբաղեցնող Զուլֆուգարովը նախապատվությունը տալիս է ղարաբաղյան հակամարտության կարգավորման փուլային ծրագրին: Սակայն նա չի բացառում նաեւ փաթեթային ծրագրի ընդունումը Ադրբեջանի կողմից: Բացի այդ, Զուլֆուգարովը, որը գլխավորել էր ադրբեջանական պատ[illegible] կարգավորման բանակցությունների գործընթացում, ասել է, որ հոգեբանական, հուզական կամ էլ սուբյեկտիվ գործոնները վճռական դեր չեն խաղում բանակցություններում:

Հոդվածում ասվում է, որ Բաքվի շատ դիտորդներ այն կարծիքին են, թե Ադրբեջանն ի վիճակի կլինի կապույան նավթի առնչությամբ արեւմտյան ներդրումների միջոցով վերադարձնել գրավյալ հողերը: Այդ կապակցությամբ նրանք ասում են, թե Հայաստանը, բախվելով անբավարար օտարերկրյա ներդրումների, կարող է դադարեցնել ԼՂՀ-ի շրջակայքում գրավյալ տարածքների ռազմական վերահսկողությունը:

Արեւմտյան որոշ դիվանագետների կարծիքով, Ադրբեջանն ի վիճակի չէ գրավյալ տարածքները վերադարձնել պատերազմի միջոցով:

Ադրբեջանի կառավարության պաշտոն[illegible] գալիս հակամարտությունը խաղաղ եղանակով լուծելու օգտին: Ընդդիմության որոշ ակտիվ գործիչներ չեն բացառում հակամարտության լուծումը ռազմական եղանակով: Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության փոխնախագահ Քերիմովն ասել է, թե չորս տարի շարունակվող հրադադարի ռեժիմից հետո Ադրբեջանը կբախվի Հայաստանի էլ ավելի կոշտ դիրքորոշմանը:

«Մուսավաթ» կուսակցության նախագահ Ղամբարը այն միտքն է հայտնել, որ եթե միջազգային հանրակցությունը կոշտ դիրքորոշմամբ հանդես չգա Հայաստանի դեմ եւ նրան չստիպի փոխել խաղաղությունը, ապա խնդիրները կավելանան:

ՀԱՄԱՌՈՏ

Ադրբեջանի դեսպանին խուզարկեցին Իրանի սահմանում

ԲԱՔՈՒ, 24 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ Թուրան գործակալության հաղորդման, մարտի 20-ին լուրջ միջադեպ է տեղի ունեցել ադրբեջանա-իրանական սահմանում: Իրանի մաքսային վարչության աշխատակիցները եւ սահմանապահները կանգնեցրել են Իրանում Ադրբեջանի դեսպան Ալիյար Սաֆարլիի ավտոմեքենան եւ ենթարկել անօրինական խուզարկության: Հաշվի չառնելով Սաֆարլիի դիվանագիտական անձեռնմխելիությունը, իրանցի պաշտոնյաները խուզարկել են նաեւ դեսպանին եւ բռնագրավել նրա փաստաթղթերը: Հետագայում փաստաթղթերը վերադարձվել են, եւ դեսպանին թույլ են տվել անցնել Ադրբեջան: Պաշտոնական Բաքուն դեռեւս չի արձագանքել այս միջադեպին: Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մի պաշտոնյա ասել է, որ իրանական կողմի գործողությունը դիվանագիտական անձեռնմխելիության վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի խախտում է: Բացառված չէ, որ այս միջադեպի առնչությամբ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը բողոքի նոտա ուղարկի իրանական կողմին:

Ուկրաինայում խորհրդարանական ընտրակռիվներ

24 ՄԱՐՏ, BBC: Ուկրաինայում շարունակվում է ընտրարշավը: Երեկ երեկոյան եվրոպատրիայում 3 մարդ վիրավորվեց Ղրիմի կոմկուսակցության տեղի կազմակերպության ընտրական շտաբում տեղի ունեցած պայթյունից հետո: Նույն օրը Պոլտավայի մարզում գնդակոծվել է Ուկրաինայի խորհրդարանի «Գերագույն ռադայի» դեպուտատության թեկնածու, Լուբնիի քաղաքագլխի ավտոմեքենան: Իսկ Օդեսայում տեղի միլիցիան շրջափակեց քաղաքային գործադիր կոմիտեի շենքը, ինչը տեղի դիտորդները գնահատել են որպես քաղաքագլխի պաշտոնի երկու հիմնական թեկնածուների միջեւ ընթացող իշխանության կռվի նոր փուլ:

Կրասնոդարում մոտ 20 հազար տուն հայտնվել է ջրի տակ

ՄՈՍԿՎԱ, 24 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Կրասնոդարի երկրամասի նշանակալի տարածքներ հայտնվել են ջրի տակ, ոչնչացել է մոտ 450 հազար հեկտար ցանքատարածք: Հեղեղման գոտում է հայտնվել 20 հազար բնակելի տուն, որոնցից մոտ 300-ը ավերվել են: Շնորհիվ ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության եւ տեղի իշխանությունների ջանքերի, մարդկանց մի մասը տուժած շրջանից էվակուացվել է հանրակացարաններ ու հյուրանոցներ: Երկրամասի նահանգապետ Նիկոլայ Կոնդրատենկոյի գնահատմամբ, վնասը կազմում է 242 մլն ռուբլի:

Իսրայելը մերժում է ԱՄՆ-ի ճնշումները

24 ՄԱՐՏ, PC: «Իսրայելը կարող է պաղեստինցիներին վերադարձնել ոչ ավել, քան էլի 9 տոկոս պաղեստինյան տարածք», հայտարարեց վարչապետ Նաթանյահուի խորհրդական Ուզի Արափը, ընդգծելով, որ Իսրայելին վերջերս տարածքների 13 տոկոսից զորքերը դուրս բերել առաջարկած Միացյալ Նահանգները լավ գիտի, որ դա անհնար է անվտանգության նկատառումներով: Ինքը, Նաթանյահուն այսօր կրկնեց, որ միայն Իսրայելը կարող է որոշել, թե էլ ինչ տարածքներ կարող են հանձնվել պաղեստինցիների վերահսկողության ներքո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 1998-1999 ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի կոչում** շնորհող հետևյալ ծրագրերով՝

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ԴԵԿԱՎԱՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համապատասխան ֆինանսավորման դեպքում, ընդունելություն կլինի նաև հետևյալ ծրագրերով՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Բարձրագույն կրթությունը և անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **մայիսի 8-ը, ժ. 15⁰⁰**:

Տեղեկությունների համար դիմել՝
Երևան, Մարշալ Բաղրամյան 40
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ընդունելության գրասենյակ (19)
Հեռ. 27-16-29

JOB OPPORTUNITIES

USAID/Caucasus, Yerevan Office has job opportunity for the following position: Computer Systems Manager: Qualifications/Requirements:; University degree in computer science or information systems management; at least four of progressively responsible professional work in computer systems management, of wich at least one year must have been with USAID; fluent in English, Russian and Armenian; thorough knowledge of systems analysis and design, computer operations management, hardware and software technology, telecommunications technology and computer application programming. Knowledge of programming [illegible] telephone systems, telephone cable wiring.

Sumbit resume and application form (available at USAID Office) to Ms. Kim Tomsen, USAID/Caucasus, 16 Aigedzor St., Yerevan, tel: 26-34-97.
Announcement closure date is April 06, 1998.

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Զրաշաս 68 հասցեում (գիտությունների ակադեմիայի շրջակայքում) սեփական երկհարկանի տան 2-րդ հարկը: Առանձին մուտք, կոմունալ բոլոր հարմարություններ, 2 ավտոնստակ, 300 մ հողամաս: Հնարավոր է տան եւ հողամասի առանձին վաճառք:

Հեռ. 52-54-39

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան
(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):

Զանգահարել 72-89-83

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 սենյականոց բնակարան, նկուղով, քաղաքի կենտրոնում:

Զանգահարել 23-56-78

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:

Հեռ.՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քառաշենքի 2-րդ հարկում:

Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բն. Նորքի IV զանգվածում, հեռ. **64-88-85, 64-93-89:**

Ուզո՞ւմ եք նիհարել առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:

Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով

52-93-53

ժամը 9-18-ը

«ՍՊՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23. Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 787. Տպաքանակը՝ 3500. Ստորագրված է տպագրության՝ 23. 03. 1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@